Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

22266

ԱՌ

Ը՛ՆԾԱՅԻ

# ԳԱՆՁԱՐԱՆ

## ԱՂՕԹԻՑ

ՀԱՒԱՔԵԱԼ 'Ի ՀՈԳԵՒՈՐ ՄԱՏԵՆԻՑ

'Ի ՊԷՏՍ ՋԵՐՄԵՌԱՆԴԻՆ ԱՂՕԹԿԵՐԱՑ.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՊՕՂՈՍԻ ՎԻՋԷՆԵԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍԵՑՒՈՅ

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ, ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՈՒՐԷՆԵԱՆ.

'Ի ԿԱԼԿԱԹԱ

Յ'ԱՐՇՈՒՆ ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ՎԻՋԷՆԵԱՆ.

1846

2266

Ընդէ՞ր ննջէք, արիք կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք 'ի փորձութիւն:

Ղուկ. Գ. ԻԲ: Հ. 46:

'Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ

# ՊՕՂՈՍ ՊԷՅԻ

# ԵՈՒՍՈՒՖԵԱՆՑ

ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ

ՈՐ ԷՐ

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ

ԳՈՐԾՈՑ

ՊԱՇՏՕՆԱՏԱՐ

ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

ԵՒ

# ՀԱՆԳԵԱՒ

ՅԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

'Ի 10 ՅՈՒՆՎԱՐԻ, 1844.

'Ի ՆՇԱՆ ԽՈՐԻՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՁՕՆԷ

ՊՕՂՈՍ ՎԻՋԷՆԵԱՆ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ և օգտակարութիւն աղօթից քաջայայտ է ամենայն բանաւորաց · և պարապելոյն յաղօթս լինի հոգեպէս անջատել 'ի զգալեաց և յօդել ընդ իմանալեաց, հեռանալ 'ի մարմնաւորաց և մերձենալ 'ի կաճառս հոգևորաց, զթռիչունս դարձուցանել աշխարհայնոց և զերեսս հաստատել յանխառն երանութիւնն երկնայնոց ։

Եւ կարի քաջ յիրաւի · Վասն զի աղօթքն են մարդոյ պաշար կենաց, զէն հոգւոյ · վահան փրկութեան ,

ւ- աղբիւր օրհնութեան և փառա-
բանութեան առ Արարչապետն եր-
կնի և երկրի՝ յորմէ ելանեն ամենայն
պտուղք բարիք և պարգեւք կատար-
եալք ։

Խրախուսել զմեզ կամելով ՓՐ-
ԿԻՉՆ մեր կալ անդադար յաղօթս՝
օրինակ գեղեցիկ ետ մեզ՝ հանե-
լով ինքնին զգիշերն ՚ի գլուխ
յաղօթան Աստուծոյ ըստ սրբա-
զան Աւետարանչին Ղուկասու ։
Վասն զի հայի Աստուած յաղօ-
թս խոնարհաց և ո՛չ արհամարհէ
զինդրուածս նոցա՝ որպէս երգէ
քնարն սաղմոսաղի ։ Վասն զի ուխտք
ուղղոց ընդունելի են Աստուծոյ,
և աղօթից արդարոց լսէ նա ըստ
իմաստնոյն Սողոմոնի ։ Վասն զի
սրբազան Առաքելոյն միշտ աղօթից
և պաշտաման և բանին հրամայէ

չային . և Կոռնելեայ լսելի եղեն աղօթք և յիշեցան ողորմութիւնք առաջի Աստուծոյ : Աղօթքն հաւատովք փրկեցին զաշխատեալն և զհիւանդացեալն . և յոյժ զօրաւորք են աղօթք արդարոյ յօգնականութիւն ըստ երանելոյն Յակովբու Առաքելոյ : Աղօթիւք փակեաց Եղիա զերկինս զերիս ամս և զվեց ամիս : Աղօթիւք Եզեայ նադարձեալ զերկինն , և իջին անձրեւք և բուսոյց երկիր զպտուղ իւր : Աղօթիւք Փենեհեսի և իւրեանցայնոցն յուսայր և Պօղոս արձանանաւ պեսնութեան սիրելեայ : Աղօթիւք և չորս կենդանիքն և քսան և չորս երիցունքն անձանէին առաջի Գառինն 'ի վայելեմ յանճառանալի երանութեան ըստ յայտնութեան արծուատեան Յովհաննու Աւե-

պարանչի ։ Աղօթիւք սրբոյն ճգնա-
ւորի և ամենաքաղցրն Աստուած՝
ընդունելով 'ի յետաց հրեշտակաց
ղաղաշանո ջերմեռանդն աղօթկե-
րաց ։ Ապա ուրեմն դժուարանաւ այ-
սուհետև պա՛րտ է մեզ ամենեցուն
և լինիլ զուարթունք յաղօթս բար
սրբոյն Պետրոսի ։ Առաջնորդ զ'ի
սրբոյն Բարողէ առացեալն և ե-
կրկնեցից ասելով . Եւ արդ՝ պատ-
շաճ է մեզ փառ հանգիստ բանին ,
զի Եփրեմեան էն որք ճառեցանն մեն-
չև ցայս վայր՝ առ 'ի դարթնուցանել
զմտաւանց սիրոյդ յերոյ ։ Նա՛ առա-
նիկ ցուեղիս և դու կրկնէ Շնորհա-
լին՝ թէ ստուգեւութեան բանի
պատերազմօղ է ընկերաց . ուստի
և եռ խնդրեսաբար ադալեմ զԵփրե-
մեր ընթերցանելեան ընթռնել սի-
րով դայս Գիրս Աղօթից 'ի փառս

Աստուածոյ և 'ի պատիւ ամեներա-
նեալ սուրբ կուսին ։

Կնիք ճանիցս · զԱղօթագիր·
ւայս արձանի դասեցայ նորոգել
'ի յիշատակ հայրենատէր Հայ իշ-
խանաւորին' Պօղոս Պէյի Եուսուփ-
եանց' իմաստ արձանապատի-
ասպնջականի և Բարերարի · որ
կամս յուզեալ արքային և ներքին
գործոյ պաշտօնատար հանդիսա-
ցաւ 'ի սահմանս Օսմանեան տէ-
րութեան մեծազօր Փոխարքային
Եգիպտոսի · և որոյ պանծալի ա-
նուանն հռչակեալ է ոչ միայն 'ի մէջ
Հայկազանց · այլ և առ համայն
ղրուատուորեալ և կենցաղակիրթ
ազգին Եւրոպիոյ յայժմեան դա-
րու ։ Թէպէտ և ցաւելի է յոյժ զի
չի՛ք ինչ յիշատակութիւն այսր
մեծագործ մեծանուն մեծամեծաց

Իշխանաւորք 'ի նորափեղ պատմութեան Օսմանեան տէրութեան, սակայն յաւուալի է մեզ մեծապէսի խորհովանիք անաչառ ազգային պատմչին՝ ու տաւկահար 'ի կրիս՝ քաջ կշռեսցէ զարժանաւորութիւն մեծի առնս այսորիկ՝ ունեղէն գրով յաւերժացուցանելով զանուն սորին և զգործ ։

ԱՌ

## ՑԱՐԳՈՑ ՍԱՏԱՐԻՉԱՑ ԳՈՐԾԱՏԱՆ ԽՄՈՑ

Անօթն ընկերութեան՝ որճակայն Աստուծեան Պօլսոյ գործանայր ընթա-ցատարացեալ Կորնթայեցւոյն ասելոյ. Զի 'ի Եագնայտեմ ընծայից որք են 'ի մեզ, Եագնօք յաճախեսցեն գործո թիւնք վասն մեր։ Հարկ 'ի Վերայ իմ է այս ապահով զԱստուծոյանն խրխել էան, և զխորին երախտա-գիտութիւն որքի իմոյ գրով արդա-նայնացանել առ Եղբայր ստա-պատեան ազնիւ սատարիչն և օգնա-կանս պատգրական գործարանի ի-մոյ, որք Եագնայտեմ ընծայօք նպաստա-պատմայց եղեն ու միայն պատ-գրութեան այսր գործոյ, այլ և-

'ի ձուլեն զկապարեայ գերս եւ 'ի
յօրինեն զապագերս 'ի պէսպէս
վայելչազարդ ձեւս 'ի դէպս նորա-
կերպ տպարանիս : Արժանի տա-
տեսայ եւ զանուանս որոց երախ-
տաւորեցին եւ օգնեցինն ինձ՝ ուրոյն
ուրոյն յիշատակել 'ի սորին հան-
դերձ քանակութեամբ տրոյ իւ-
րաքանչիւրոյ, 'ի ծանօթութիւն
հասարակաց եւ 'ի յոյժ շնորհակա-
լու երախտապարտութեան իմոյ առ
նոսա ամենեսին .

'Ի վախճան բանիցս չկարեմ
եւ զանխուլ 'ի յընթերցանելեացն
թողուլ զմեծ եւ զսէան շնորհա-
պարտութիւն իմ առ արժանա-
մեծար Աւագերեցն Նազարեթայ
սուրբ Եկեղեցւոյ մերոյ՝ առ շնոր-
հաքայլ գիտնական ուրէակրօն Տէր
Յովհաննէս Խաչկեան՝ քաջաքարոզ

Քահանայն և Մեծապատիւ Նուիրակն սրբոյ Աթոռոյ Ամենափրկչեան վանացն նոր Ջուղայու․ որ իւրն հոգևոր գթած հայր սիրով յորդոր եղև Էաղմայ 'ի պատուսելէ Մերաշնելոյ օգնել և սատարել տպագրութեան Աշխարհագրոյս․ զոր Մեծաւ շնորհակալութեամբ այժմ մատուցանեմ հասարակաց։

Մնամ յարգանօք

Ամենախոնարհ Ծառայ՝

ՊՕՂՈՍ ՎԻԺԷՆԵԱՆ

Կոստանդնուպօլսեցի։

'Ի ԿԱԼԿԱԹԱ․
Ց'ԱՐԾԻԻ ՏՊԱՐԱՆԻ․
'Ի 1․ Հոկտեմբերի․ 1846․

# ԱՑՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ

ՎԱՍՆ
ՆԱԶԱՐԵԹԱՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ
ՀԱՅՈՑ
'Ի ԿԱԼԿԱԹԱ
ՕՐԻՆԱԿ · 60 · ՌՈՒՓԻ · 150 ·

ՎԱՍՆ
ՀԱՅԿԵԱՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ
'Ի ԿԱԼԿԱԹԱ
ՕՐԻՆԱԿ · 50 · ՌՈՒՓԻ · 100 ·

ԱՂԱՑ
ՅՈՎԱՆՋԱՆ ԽԼԻԱՋԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 25 ·

ԵՒ
ՀԱՍՏԱՏՈՂ ՏՊԱՐԱՆԻՍ

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍ Ս · ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 12 ·

ԲԺԻՇԿ
ՍԱՐԳԻՍ Մ · ՇԻՐԽՕՌԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍ Յ · ՎՐԴԱՆԷՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԽԱՉԻԿ Մ · ՇԻՐԽՕՌԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄԱՂԽԱՍ Ս · ՄԱՂԽԱՍԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄԿՐՏԻՉ Ս · ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 12 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ · ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 5 · ՌՈՒՓԻ · 15 ·

# ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ
ԱՂԱՑ ՄԱՐՀԱՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ջ · ՇԻՐԽՕՌԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 3 · ՌՈՒՓԻ · 12 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎԱԿԻՄ Դ · Ն · ՊՕՂՈՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԱՂԱԲԷԳԵԱՆ ԵՂԲԱՐՔ
ՕՐԻՆԱԿ · 3 · ՌՈՒՓԻ · 16 ·

ՎԱՐԺԱՊԵՏ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6 ·

ՊԱՐՈՆ
ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՓԻԼԻՊՊՈՍ Ա · ԳԷՈՐԳԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6·

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Դ․ ԲԱՂՐԱՄԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՌԱՓԱՅԷԼ Զ․ ՀԻՐԽՕՌԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6 ·

ՊԱՐՈՆ
ԳՐԻԳՈՐ ԱԲԳԱՐԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 3 · ՌՈՒՓԻ · 15 ·

ՊԱՐՈՆ
ՊԵՏՐՈՍ Ե · ՊՕՂՈՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 3 · ՌՈՒՓԻ · 9 ·

ՊԱՐՈՆ
ՃՄԻՆ Ե · ԷՄԻՆԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ 6 ·

ՊԱՐՈՆ
ՊԵՏՐՈՍ Ս · ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԶՕՀՐԱՊ Մ · ՄԱՆՈՒԿԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 8 ·

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ԳՐԻԳՈՐ Յ · ՀԱՒԷՏԻԿ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԿԱՐԱՊԵՏ Մ · ՇԻՐԽՕՌԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆ ՄՈՎՍԷՍ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Յ · ՄՈՎՍԷՍ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄՈՎՍԷՍ Յ · ՄՈՎՍԷՍ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՈՍԿԱՆ Թ · ՈՍԿԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
Յ. ԽՕ[illegible] ՄԻՔԱՅԷԼ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՄԱՆՈՒԿ ԹՈՐՈՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՅՈՎՍԷՓ Յ. ՔԱՄԱԼ
ՕՐԻՆԱԿ. 2. ՌՈՒՓԻ. 6.

ՊԱՐՈՆ
ԳԷՈՐԳ ԱՒԵՏԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՊԵՏՐՈՍ Յ. ՍԱՐԴՍԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ. 2. ՌՈՒՓԻ. 12.

ՊԱՐՈՆ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՎՐԴԱՆԷՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՄԱՆՈՒԿ ՋՕՀՐԱՊԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 3. ՌՈՒՓԻ. 12.

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՄԻՔԱՅԷԼ Յ. ԽԱՉԿԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3·

ՊԱՐՈՆ
ՄԱՆՈՒԿ Յ · ԴԱՒԹԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ · ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ 3 ·

ՊԱՐՈՆ
ԴԱՒԻԹ Մ · ԲԷԳԼԱՐՈՎ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄԿՐՏԻՉ Յ · ՍԱՐԳՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1· ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ · ՃԻՐԽՕՒԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6 ·

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՈՐԴԱՆԱՆ Պ. ՈՐԴԱՆԱՆԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ԹԱԴԷՈՍ Խ. ԱՎԵՏՈՒՄ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 5.

ՊԱՐՈՆ
ԳԷՈՐԳ Մ. ՇԻՐԽՕՌԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ԿԻՐԱԿՈՍ Կ. Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՄԿՐՏԻՉ Խ. ՅՈՎԱԿԻՄ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

ՊԱՐՈՆ
ՂՈՒԿԱՍ Գ. ՂՈՒԿԱՍ
ՕՐԻՆԱԿ. 1. ՌՈՒՓԻ. 3.

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՐԴԻՍ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 6 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՍԷՓ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ՄԱՐԳԱՐ ԳԱՒԻԹ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 5 ·

ՊԱՐՈՆ
Գ · Ս · ՄԱՆՈՒԿ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 3 ·

ՊԱՐՈՆ
ԳԱԲՐԻԷԼ ԵՂԻԱԶԱՐ
ՕՐԻՆԱԿ · 1 · ՌՈՒՓԻ · 6 ·

ՊԱՐՈՆ
ԵՓՐԵՄ Յ · ԵՓՐԵՄԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6 ·

ՊԱՐՈՆ
ԳԱՍՊԱՐ Մ · ԳԱՍՊԱՐԵԱՆՑ
ՕՐԻՆԱԿ · 4 · ՌՈՒՓԻ 12 ·

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎՐԴԱՆԷՍԵԱՆ,

ՕՐԻՆԱԿ · 2 · ՌՈՒՓԻ · 6 ·

---

Գումար Ստորագրութեան

Օրինակ 197· Ռուփի 567·

# ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ

# ԳՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ

ԵՒ

# ՅՕՐԻՆԵԼՈՑ

ՃՏՊԱԳԻՐՍ

---

ՊԱՐՈՆ

ՄԿՐՏԻՉ Ս. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ

ՌՈՒՓԻ. 100.

ՊԱՐՈՆ

ՄԱՐՏԻՐՈՍ Ս. ՅՈՎՀԱՆՆԵԱՆՑ

ՌՈՒՓԻ. 116.

ՎԱՐԺԱՊԵՏ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ

ՌՈՒՓԻ. 20.

# ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ԿԱՐԱՊ՝ Տ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 56 ·

ՊԱՐՈՆ
ՈՄ՟Ն ԲԱՐԵԿԱՄ
ՌՈՒՓԻ · 25 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ · ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՌՈՒՓԻ · 33 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ · ՇԻՐԽՕՐԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 30 ·

ՊԱՐՈՆ
Ա · ԳԱԼՍՏԱՆ
ՌՈՒՓԻ · 150 ·

ՊԱՐՈՆ
ՊԵՏՐՈՍ Յ · ՊՕՂՈՍԵԱՆ
ՌՈՒՓԻ · 20 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ · ՎԱՐԴԱՆԵԱ՛Ն
ՌՈՒՓԻ · 8 ·

# ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՌԱՓԱՅԷԼ Ջ. ՇԷ՝ԽՈՌԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 10.

ՊԱՐՈՆ
ՍՏԵՓԱՆՆՈՍ Ջ. ԱԻԵՏ
ՌՈՒՓԻ. 8.

ՊԱՐՈՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԲԱՂՐԱՄԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 5.

ՊԱՐՈՆ
ԳՐԻԳՈՐ ԱԲԳԱՐԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 15.

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԱԲԳԱՐԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 10.

ՊԱՐՈՆ
ՓԻԼԻՊՊՈՍ Ա. ԳԷՈՐԳԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 5.

ՊԱՐՈՆ
ԳԱՍՊԱՐ Մ. ԳԱՍՊԱՐԵԱՆՑ
ՌՈՒՓԻ. 20.

# ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ՋՕՀՐԱՊ Տ · ՄԱՆՈՒԿԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 15 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ · ՇԻՐԽՕՌԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 5 ·

ՊԱՐՈՆ
ԳԷՈՐԳ Մ · ՇԻՐԽՕՌԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 5 ·

ՊԱՐՈՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԳԱՐԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 15 ·

ՊԱՐՈՆ
ԵՓՐԵՄ Ց · ԵՓՐԵՄԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 8 ·

ՊԱՐՈՆ
ՊԵՏՐՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
ՌՈՒՓԻ · 5 ·

ՊԱՐՈՆ
ՅՈՎՍԷՓ ԱՂԱԲԷԳԵԱՆ
ՌՈՒՓԻ · 5 ·

ԾԺԱ՛ՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ
ԻՄԻՆ Ց · ԻՄԷՖԵԱՆՑ
ՌՈՒԻՓԻ · 25 ·

Կատամար 714 · Ոսուէի ·

»

# ԱՂՕԹՔ

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

ՈՐՊԷՍ ՊԱՏՈՒԻՐԷ ՓՐԿԻՉՆ ՄԵՐ ։

Այսպէս կացէք դուք յաղօթս ։

Մ՚տթ․ Գ․—Զ․ Հ—Ց ։

Հա՛յր մեր որ յերկինս , սուրբ եղիցի անուն քո ․ Եկեսցէ Արքայութիւն քո ․ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր ։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի՛ տանիր

զմեզ 'ի փորձութիւն · այլ փր-
կեա զմեզ 'ի չարէ ։ Զի քո է
արքայութիւն, եւ զօրութիւն,
եւ փառք յաւիտեանս · Ամէն ։

# ԱՂՕԹՔ

## ԶԱՐԹՆՈՒԼՆ 'Ի ՔՆՈՅ

Կնքելով զերեսս նշանաւ սրբոյ
Խաչին ·

Յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ
Հոգւոյն սրբոյ · Ամէն ։

ՕՐՀՆԵԱԼ է մեռեալն եւ յա-
րուցեալն 'ի մեռելոց ՔՐԻՍՏՈՍ
Աստուած, որ զարթոյց զիս 'ի մա-
հահանգոյն քնոյ, խաղաղութեամբ

անցուցանելով զգիշերս · աղաչեմ և խնդրեմ, զի զմնացեալ ժամանակս խաղաղութեամբ պահեսցէ շնորհիւ և ողորմութեամբ իւրով · Ամէն ·

# ԱՂՕԹՔ

## ԱՌԱՒՕՏԵԱՆ
## ԵՒ
## ԾԱԳՄԱՆ ԱՐԵՒՈՒ

Տէր եթէ զշրթունս իմ բանաս՝ բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո · Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ·

'Ի գիշերի և 'ի տուընջեան և յամենայն ժամու„ զքեզ աղաչեմք, և 'ի քէն խնդրեմք մարդասէր Տէր ։ Լո՛ւր մեզ Աստուած ՓՐԿԻՉ մեր. խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրուածս մեր. զի մի՛ ունայն լիցին վաստակք ծառայից քոց ։ Այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր 'ի գործ արդարութեան, և 'ի պտուղ Աստուածպաշտութեան ։ Ընկա՛լ Տէր՝ զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հատո՛ մեզ զողորմութիւն քո առատապէս. ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ ։ Զօրացո՛ զմեզ Տէր՝ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ ։ Պահեա՛ զմեզ որպէս բիբ ական ։ Եւ արա՛ առ մեզ նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբանութիւն անուանդ քում

սրբոյ ։ Զի 'ի քո փառս կատարի ամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն ։

# ԱՂՕԹՔ

## ՑԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒ

ՀՈԳԻ Աստուծոյ որ յայսմ ժամու ահագին շնչմամբ իջեր 'ի վերնատունն բաժանելով զհրեղէն լեզուս, էջ և առ մեզ յերրորդ ժամուս, և լից զմեզ ամենայն բարութեամբ քո՝ իբրև ըզսուրբ զԱռաքեալսն, հանգչելով 'ի սիրտս մեր յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

# ԱՂՕԹՔ
## 'Ի ՄՏԱՆԵԼ
## ՅԵԿԵՂԵՑԻՆ

Զ ԱՅՐ *արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու Տէր · այլ ես ըստ բազում ողորմութեան քում, մտից 'ի տուն քո՝ և երկիրպագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո ։*

*Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, Տէր օգնական իմ և* ՓՐԿԻՉ *իմ ·*

*Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ, և մի՛ 'ի բացեայ առնիր յինէն · հայեա՛ց յօգնել ինձ՝ Տէր փրկութեան իմոյ ։*

# ԱՂՕԹՔ
## ՍՈՒՐԲ
# ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ծիսին և ըստ աւանդութեան Հայկականց ՔՐԻՍՏՈՍԱԴԱՒԱՆ և Լուսաւորչական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ արարողութեանց և պաշտամանց 'ի ժամու կատարման խորհրդոյ Սուրբ Պատարագի, հանդերձ նշանակութեամբ զգեստուց Պատարագչին ։

## ՔԱՀԱՆԱՅՆ

Նշանակէ զՏէր մեր, որ եղեւ ճշմարիտ Քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և զինքն 'ի

ներքոյ տեսակայ Հացի և գինւոյ՝ Հօր Աստուծոյ պատարագեայ։

## ՍԱՂԱՒԱՐՏՆ

Նշանակէ զզօրութիւն յաղթութեան Տեառն մերոյ, որով եւ 'ի պատերազմ ընդդէմ Բելիարայ, և արար զերկութիւն ազգի Մարդկան։

## ՇԱՊԻԿՆ

Նշանակէ զանմեղութիւն և ըղձաւորութիւն վարուց Տեառն մերոյ և զմայլումն նորին երանայնատեսութեամբ էութեանն Աստուծոյ։

## ԳՕՏԻՆ

Նշանակէ զողջախոհութիւն Տեառն մերոյ և զանխառնութիւն նորին՝ 'ի զգայական ցանկութեանց։

## ԲԱԶՊԱՆՆ

Նշանակէ զյօժարութիւն որդի, և զպատրաստութիւն Տեառն մերոյ,

առ 'ի կատարել զհաճութիւն Հօրն երկնաւորի ։

## ՈՒՐԱՐՆ

Նշանակէ զհնազանդութիւն Տեառն մերոյ առ 'ի լնուլ զկենսագործ տնօրէնութիւնն իւր՝ ըստ նախասահմանութեան Հօրն երկնաւորի ։

## ՇՈՒՐՋԱՌՆ

Նշանակէ զլրումն ամենից առաքինութեանց՝ որով զարդարեալ էր մարդկութիւն Տեառն մերոյ 'ի սկզբանէ յղացման իւրոյ ։

## ՄՏԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ՍՐԲԱԶՆԱՏՈՒՆՆ

Նշանակէ զիջումն Բանին Աստուծոյ 'ի յարգանդ Ամենօրհնեալ կուսին Մարիամու ։

## ԶԳԵՍՏԱՒՈՐԻԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Նշանակէ զներմարմնութիւն Բա-

Նէն Աստուծոյ 'ի յարգանդէ Ամէնէրանուհւոյ կուսին Մարիամու։

---

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ
## ԶԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

Նշանակէ զաղօթս և զպաղատանս, զոր Նախահարցն մատուցանէին առ Աստուած վասն գալստեան Տեառն Մերոյ։

---

# ԱՂՕԹՔ

*ԱՅՍ Մարգարէիցն ձայն լինէին՝ որ զօրհնեալդ քո գալստեան զազատարարդ հրաման՝ կանխաւ ազդէին. Եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկա-*

նել վասն անրաւութեան ։ փոքունք են նուաղունք ։ Օրէնակք և Նմանութիւնք ։ Հէնք և ժամանակաւորք ։ Առ աւետեացդ քո յայտնութիւն, և Խաչեդ փրկագործութիւն ։ Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վկայութեան արեան քո ուխտի. որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան զդատակնիք մահուն Հաբելի՝ զյաղթանակ բարեայ քումդ հանդիսի 'ի կեանս կրկինս և անմահականս ։ Շնորհաց ։ Մկրտութեան ։ Յարութեան ։ Նորոգութեան ։ Առ քեզ ընտանութեան ։ ընդ Հոգւոյդ սրբոյ միութեան ։ Քաւութեան ։ Ազատութեան ։ Լուսաւորութեան ։ Մշտնջենաւոր մաքրութեան ։ Իսկապէս երանութեան ։

*Ընդ վերնոցն կցորդութեան ան-կապուտ փառացդ ։ ՚Ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն՝ հաշտեցուցիչ բանից աղաչանք , Եւ զոր ահաւորն է ասել՝ կարդեմ սատանօր , յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց ։ Աստուած իսկ լինիլ ընտրութեամբ շնորհին , և ընդ հաստողիդ միանալ՝ Տէրունի մարմնոյդ Ճաշակմամբ , և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ ։ Զոր կատարումն երջանիկ խոստմանն՝ ըստ Պօղոսի բանին ոչ ունէր օրէնն ։ Այլ դու փրկութիւն՝ եկիր հայրենիդ քո հարստութեամբ ․ արարեր և կատարեցեր զյուսոյն երկարաձգութիւն ․ որ առ քեզ պահեալ անհամառօտելի՝ քաւիչ ամենայնի ։ Եւ քեզ փառք ընդ Հօր*

*քում, 'ի գովեստ բարերարութեան Հոգւոյդ սրբոյ · յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։*

## ԵԼԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ՍՐԲԱԶՆԱՏԱՆԷՆ

Նշանակէ զծնունդն և զյայտնութիւն Տեառն Մերոյ ։

## ԳՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԻ ԲԵՄԻՆ

Նշանակէ զգնալ Տեառն Մերոյ ընդ աշակերտաց իւրոց 'ի լեառն Ձիթենեաց ։

## ԱՂՕԹՔ

**Տէր** *իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ 'ի մերձենալ ժամու չարչա-*

*բանից քոյ՝ վասն տառապանաց որդ-
ւոյդ սկսար երկնչել և հոգալ.
Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի զամե-
նայն զհոգս և զտրտմութիւնս
իմ՝ վերանուիրեցեմ քեզ 'ի
պատիւ սրբազանից քոյոց չար-
չարանաց, և արդեամբք նոցին
ընդունիցիմ զփրկութիւն հոգւոյ
իմոյ։*

## ԼՈՒԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՁԵՌՈՒ՛Ն

Նշանակէ զպարկեշտութիւն Տեառն մերոյ 'ի ներքինն յիթենեայ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ 'ի յաղօթելն քո առ Հայր,*

*փղձկմամբ սրտի հեղեր զարտասուս յաչաց քոց 'ի լուացումն մեղաց նախահօրն ։ Շնորհեա՛ մեղաւորիս զճշմարիտ զղջումն զի զտիւ և զգիշեր ողբալով զյանցանս իմ, և խոստովանելով ըզմեղս իմ՝ ընդունիցիմ զներումն և զթողութիւն յամենառատ աղբերէդ կենաց ։*

---

## ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ ԱՌԱՋԻ

Նշանակէ զանձկանէն Տեառն մերոյ 'ի վերայ երեսաց երկրաց, և զհեղումն յինքենէ զքրտունս արեան ։

---

## ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ *որ 'ի սաստկանալ երկանց քոց՝*

գկայլակս արեան հոսեցեր 'ի մարմնոյ քումմէ ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի 'ի պատիւ չարչարանաց քոց, փոխանակ արեան՝ հեղից յաչաց իմոց զաղբիւրս արտասուաց ։

---

## ԵԼԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ԲԵՄՆ

Նշանակէ զաղօթսն Տէառն մերոյ յաղօթելն 'ի լերինն Ձիթենեաց ։

---

## ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ յաղագս անանդորրութեան մերոյ քո՝ հոգար կրկին և երեքկին աղօթել առ Հայր քո երկնաւոր ․

*Շնորհեա՛ մեղաւորիս զյարատեւութիւն 'ի գործս բարիս ; զի արժանի լինիցիմ ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ ։*

22266

---

## ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ՀԱՐԿԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ

Նշանակէ զծնրադրութիւն Տեառն մերոյ 'ի Լերինն Ձիթենեաց ։

---

# ԱՂՕԹՔ

ՏԷՐ *իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ ծունր կրկնելով առ Հայր քո երկնաւոր՝ աղօթեցեր մարդկաբար՝ զի անցցէ 'ի քէն բաժակ չարչարանացն ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի յաւէտ ծունր կրկնե-*

լով երկրպագանիցեմ կենդանատուիդ խմում՝ հոգւով և ճշմարտութեամբ ։

## ՀԱՄԲՈՒՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍԵՂԱՆՆ

Նշանակէ զմտանելն Տեառն Մերոյ ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ համբուրիւ նենգութեան, մատնեցար՚ի Յուդայէ ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի անխարդախ սրտիւ, պաշտեցեմ զքեզ՞ զամենայն աւուրս կենաց իմոց ․ և միշտ պատրաստ լինիցիմ առ՚ի կա-

*տարել զպաշտօն սիրոյ՝ 'ի դէմս սիրելեաց և Թշնամեաց իմոց ։*

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՄԵՂԵԴԻ

Նշանակէ զխօսիլն Տեառն մերոյ խաղաղութեամբ ընդ Յուդայի՝ և ընդ ամբոխին 'ի լերինն Ձիթենեաց ։

# ԱՂՕԹՔ

Տէ՛ր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ վասն փրկութեան իմոյ ընդ դաւաճանողաց Թշնամեաց քոց, քաղցրութեամբ և հեզութեամբ անդորրաբար խօսեցար ընդ նոսա ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի ըստ օրինակի կենսատուիդ իմում՝*

ընդ ամենից հալածչաց իմոց և ատելեաց՝ համբերութեամբ և երկայնմտութեամբ վարեցիմ 'ի վառըս անուանդ քում սրբոյ ։

## ԻՋԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ԲԵՄԷՆ

*Նշանակէ զիջանելն և զծածկելն Տեառն մերոյ 'ի լեառնէն ձիթենեաց 'ի պալատն Աննայի ։*

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ 'ի յանողորմից և 'ի յամբարշտաց Հրէից ըմբռնեցար՝ կապեցար՝ և ածար իբրև զպարտաւոր ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի ար-

զեամբ չարչարանաց քոց՝ արժա-
նիցիմ 'ի կայանաց մեղաց իմոց․
և կապակցեցիմ սիրով ընդ քեզ
հաստատապէս ։

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ՈՐ ԳԵՐԱԳՈՅՆ

Նշանակէ ղաղաղակ դպրաց և ժողովրդեան 'ի պաշտաւնին ։

# ԱՂՕԹՔ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ՝ և հաւա-
տամ ամենակատար, ինքնակա-
տար և նախակատար, զհամագոյ
և զպաշտելի, երկրպագելի և զե-

րագոյ զամենասուրբ զԵրրորդու-
թիւնն՝ զՀայր և զՈրդի և զսուրբ
Հոգին ։ Հայր անծին և անսկիզ-
բըն՝ ծնօղ Որդւոյ և յառաջ առա-
քօղ Հոգւոյն սրբոյ ։ Իսկ Որդին
ծնեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւի-
տեանս անմարմնաբար և անժա-
նակապէս ։ Եւ Հոգին սուրբ Բըղ-
խեալ ՚ի Հօրէ անհատաբար և ան-
սպառապէս , համագոյակից Հօր
և փառակից Որդւոյ ։ Միու-
թեամբն բաժանեալ յերիս յան-
ձինս , և Երրորդութեամբն միա-
ցեալ ՚ի մի բնութիւն և ՚ի մի
Աստուածութիւն ․ Եւ արդ՝ ա-
ղաչեմք զքեզ Հայր երկնաւոր ․
միջնորդութեամբ Միածնի Որդ-
ւոյ քո , և զթութեամբ Հոգւոյդ
սրբոյ , տո՛ւր մեզ Տէ՛ր Հոգի զգաս-
տութեան , Հոգի խորհրդոյ , Հոգի

հեզութեան, Հոգի զօրութեան, Հոգի իմաստութեան, Հոգի գիտութեան, Հոգի երկիւղի և Աստուածպաշտութեան. և լից ամենայն բարեգործութեամբ. որպէս զի զկամս քո արարեալ յայսմ աշխարհի, եղիցուք արժանի ողորմութեան քում 'ի հանդերձելումն շնորհօքն ՔՐԻՍՏՈՍԻ. ընդ որում քեզ և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ' որ հեզութեամբ և խոնարհութեամբ համբերեցեր խրոխտանաց և սպառնալեաց դպրաց և փարիսեցւոցն վասն փրկութեան իմոյ: Շնորհեա՛ մեղաւորիս, զի երկայնմտութեամբ համբերեցից ընդդէմ ա-

մենից սանձարութեանց՝ երեւել֊
եաց եւ աներեւութից թշնամեաց
իմոց ։

## ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ԲԵՄՆ

Նշանակէ զդառնալն Տեառն մերոյ
'ի պալատն Պիղատոսի ։

## ԱՂՕԹՔ

Տէ՛Ր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝
որ 'ի քահանայից եւ 'ի ծերոցն
մատնեցար իբրեւ զմահապարտ 'ի
ձեռն Պիղատոսի ։ Շնորհեա՛ մե֊
ղաւորիս զի զօրութեամբ շնոր֊
հաց քոց ազատեցիմ 'ի մատ֊

Նեցմանէ 'ի ձեռս իշխանին խաւարայնոյ և պղծանեկաց նորին ։

---

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՃԱՐԱԿԱՆ

Նշանակէ պաշտպանութեան և պերճախօսութեան աշտօղին ծաղկելոյ ։

---

# ԱՂՕԹՔ

ԽԱՂ Թափեալ անուն՝ միածին Որդի՛ Աստուծոյ՝ Աստուած Ճշմարիտ, որ յանձառական փառաց խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր զմարմին 'ի սուրբ և յանշաղախ կուսէն Մարիամայ. եղեր մարդ ճշմարտապէս՝ անփոփոխելիդ 'ի յէութեան, ան-

ցանելով ընդ ամենայն կիրս մարդկային՝ բաց 'ի մեղաց . 'ի յերկրի երեւեցար և ընդ մարդկան շրջեցար , և կատարեցեր զամենայն ըստ օրինացն , լրումն լինելով Մարգարէից և օրինաց . զանիմանալի և զանհասանելի անուշահոտութիւն Աստուածութեանդ բուրեցեր յաշխարհի՝ հաղորդելով զամենեսեան երկնաւոր և առատաբաշխ պարգևիդ , 'ի յոր կցորդին զմայլեալ անմահացան տիեզերք ։ Եւ արդ՝ դու նոյն ինքն բարերար և բազումողորմ , բա՛ց զքիմս մտաց իմոց հոտոտել 'ի հոտոյ անուշից մարմնոյ Աստուածութեան քո , և ընկա՛լ զաղօթս մեր իբրև զխունկ անոյշ և որպէս զՊատարագն Աբելի , Նոյի և Աբրահամու , և իբրև

*գրանաւոր պատարագս սրբոց քոց. և սիրողաց անուան քո՝ որք 'ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, որոց մասին և մեզ լիցի ժառանգութիւն շնորհօք Միածնիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

---

## ՇՐՋԱԲԵՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՆ

Նշանակէ զշրջաբերելոյն Տեառն մերոյ 'ի տանէն Պիղատոսի առ տունն Հերովդէի:

---

# ԱՂՕԹՔ

## ՅԵՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԻՆ

ՍՈՒՐԲ Աստուած անմահ և հզօր՝ որ սրբարանեալ պաշտիս 'ի

*հրեղէն և յանմարմին զուարթնոցն, անլռելի և անդադար օրհնաբանութեամբ• զոր և Սերովբէքըն սոսկալի և ահեղագոչ ձայնիւ երգեն զերգս երեքսրբեան՝ բարեբանելով զանմահ Տէրութիւնդ, և Քերովբէքն գովասանական ձայնիւ փառաւորեն զանբաւազօր Աստուածութիւնդ, և ամենայն զօրութիւնքն վերնական զոհաբանեն երկրպագութեամբ փառաւորելով զամենազօր Թագաւորութիւնդ։ Ընդ որս և մեք բանաւոր հօտ քո, և ստեղծուածք անարատ ձեռաց քոց՝ ժողովեալ 'ի գաւիթ Սուրբ Եկեղեցւոյ քո՝ կալով առաջի Աստուածընկալ Սուրբ Սեղանոյս՝ տկար անձամբ և մեղաւոր շրթամբք երգեմք զերգս երեքսր-*

բեան սրբասացութեամբ, և աղա-
չեմք զառատաղբերաշխ գթութիւնդ.
ընկա՛լ զպտուղ շրթանց և զբա-
նաւոր Պատարագս սրտից մերոց
'ի հաճոյս քո ըստ վերնոցն ար-
ժանաւորութեան, և թո՛ղ մեզ
զամենայն յանցանս մեր, զկամայ
և զակամայ, զգիտութեան և
զանգիտութեան, զմտաց և զխոր-
հրդոց, զբանից և զգործոց, զհոգ-
ւոց և զմարմնոց, և զամենայն
մասանց անդամոց, որպէս զի լիցի
մեզ կարողութիւն արժանապէս
օրհնել զքեզ և զովել զանուն
քո սուրբ: Տո՛ւր մեզ Տէ՛ր մաք-
րութիւն մտաց, զղջումն սրտից,
ճշմարտութիւն շրթանց, զար-
տասուս աչաց, ամբծութիւն
հոգւոց, և սրբութիւն մարմնոց:
Կցո՛ զմեզ ամենայն առաքինու-

*թեամբ, պայծառ հաւատով, աներկբայ յուսով և մաքուր սիրով։ Եւ զարդարեա՛ զմեզ խոհեմութեամբ՝ ողջախոհութեամբ, արիութեամբ՝ և արդարութեամբ։ Զօրացո՛ զմեզ յաղթօղ լինիլ ընդդէմ հնարից բանսարկուին, և զամենայն նետս մուխս չարին շիջուցանել· արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կալ մնալ յաշխարհի ըստ հաճոյից և ըստ կամաց քոց, և յետ աստի կենացս զանձառ բարիսն վայելել աներամբ մերով· որում փառք և զօրութիւն յաւիտեանս· Ամէն։*

*Տէ՛ր իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ վասն իմ 'ի յանօրինաց արհամարհեցար և այպանեցար։ Շնորհեա՛ մեղաւորիս զի օգնութեամբ սրբազանից քոց չարչարանաց*

'Ի ԺԱՄՈՒ ՊԱՏԱՐԱԳԻ

զերծանիցիմ 'ի խայտառակութենէ սարսափելի հրապարակին ։

ԸՆԹԵՌՆՈՒԼՆ ԶԳԻՐՍ
ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆՍ
ԵՒ
ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆՍ

Նշանակէ զհարցաքննութիւն Հերովդէի և Պիղատոսի ։

## ԱՂՕԹՔ
## ՅԵՏ
## ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ
## ԸՆԹԵՐՑՄԱՆՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն իմ իբրև զպարտաւոր և.

*վճռապարտ կացեր 'ի յատենի դատաւորացն մեծաւ խոնարհութեամբ: Շնորհեա՛ մեղաւորիս, զի 'ի միւսանգամ քո գալստեանն՝ զուարթերես մատչիցեմ առ դատաւորդ իմ երկնաւոր:*

---

ԸՆԹԵՌՆՈՒԼՆ
ԶՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՆ

Նշանակէ զպատասխանին Տեառն մերոյ, զոր ետ Պիղատոսի:

---

# ԱՂՕԹՔ

ՅԵՏ
ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ
ԸՆԹԵՐՑՄԱՆՆ

ՏԷՐ *իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ կալով առաջի Պիղատոսի*

վկայեցեր ճշմարտութեան ։ Շը-
նորհեա՛ մեզ աղաւթիւ՝ զի հաւատով
և սիրով քո ամրացեալ՝ ոչ երկի-
ցեմ 'ի յանօրինաց, և 'ի յանհաւ-
ատից բռնաւորաց, այլ համար-
ձակապէս խոստովանիցիմ զքեզ
Աստուածդ իմ ճշմարիտ՝ մարմ-
նացեալ, չարչարեալ և խաչե-
ցեալ վասն փրկութեան իմոյ ։

## ԸՆԹԵՌՆՈՒԼՆ
## ԶՀԱՒԱՏԱՄՔՆ

Նշանակէ զդաւանութիւն Պետրոսի Առաքելոյն ։

# ԱՂՕԹՔ
## ՅԵՏ ԶՈՅԳ ԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԻՆ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ
ըստ Աստուածայնոյ քում տրա-

մադրութեան՝ թոյլ ետուր Պետրոսի զքեզ մարդկայի՛ն ուրանալ. Շնորհեա՛ մեղաւորիս, զի զքեզ միշտ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ մի Աստուած ճշմարիտ խոստովանեցից, և հաւատացից և դաւանեցից։

## ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՍԵԼՈՎ. ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Նշանակէ զդառնալն Տեառն մերոյ առ Պետրոս։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ Աստուածայնովդ քով զթու-

Թեամբք դարձար և ակնարկեցեր առ Պետրոս՝ տալով նմա զջուրն և զյորդումն արտասուաց ։ Շնորհեա՛ մեղաւորիս զճշմարիտ զջուրն սրտի · զի զտիւ և զգիշեր ողբալով զսխալանս իմ՝ ընդունիցիմ զներումն և զթողութիւն ամենայն մեղաց իմոց ։

ԱՌՆՈՒԵԼՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ
'Ի ԳԼԽՈՅ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԶՍԱՂԱՒԱՐՏՆ

Նշանակէ զմերկացուցանելն Տեառն մերոյ 'ի զինուորաց ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս որ վասն փրկութեան իմոյ զգեստս

Նախատանաց զգեցար · զանից և ապտակաց համբերեցեր ։ Շնորհեա՛ մեզ աւուրիս, զի 'ի ձեռն ապաշխարութեան մերկանայցեմ յինէն զգեստս պղծութեան · և զգենուցում զշնորհդ քո երկնային · և կապակցեցայց ընդ քեզ, զի դու ես վերականգնիչ իմ ։

---

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՆ

Նշանակէ զկապակելն Տեառն Քրիստոսի 'ի զինուորաց ։

---

## ԱՂՕԹՔ

Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծոյ և Բան Հօր, որ ըստ անճառ բարերարութեան քո

ո՛չ կամեցար անտես առնել զարարածս ձեռաց քոց, այլ մարդասիրապէս զթացար յազգս մարդկան. խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ Էդ՝ Աստուած, առեր զմարմին 'ի սուրբ կուսէն Մարիամայ, կամաւ Հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն, զամենայն զմարդկայինս յանձն առեր կրել բաց 'ի մեղաց. և զԱստուածային մարմինդ քո ետուր փրկանս փոխանակ բազմաց. ըստ կանխասացութեան անշուշտ հրամանի քո՝ խաչի և մահու համբերելով. Հովիւդ քաջ զանձն քո եդեր 'ի վերայ բանաւոր հօտի քո, ժողովել զցրուեալսն 'ի փարախ Կաթուղիկէ սուրբ Եկեղեցւոյ քոյ, լինել մի հօտ և մի հովիւ. Վասն որոյ՝ մեք ժողովուրդք և

խաչն արօտի քո՝ երկրպագեմք գլ-
մօք խոնարհեալ, և 'ի ծունկս
անկեալ աղաչեմք զանբաւ մար-
դասիրութիւն քո. մի թողուր
զմեզ 'ի ձեռաց քոց, և մի անտես
առներ զանբերծ Արեամբ քո փըր-
կեալ հօտս. մի տար զմեզ 'ի
փորձ թշնամւոյն և հակառակոր-
դին մերոյ. սրբեա՛ զմեզ 'ի մեղաց
և մաքրեա՛ զմեզ յամենայն անօ-
րէնութեանց մերոց. լուա՛ ըզ-
սիրտս մեր 'ի խղճէ չարեաց և
փրկեա՛ զմեզ յանիրաւութեանց.
լո՛յս տուր Տէ՛ր աչաց մերոց, զի
մի երբէք ննջեսցուք 'ի մահ, և
մի լիցի ասել պարծանաց թշնամ-
ւոյն, այլ խորտակեալ ջաղխես-
ցի գլուխ նորին՝ զօրութեամբ
ամենայաղթ Խաչի քո, և տկա-
րասցին զօրութիւնք մեքենայից

Նորա ։ Եւ տուր մեզ ա́նարգել և անբռնադատ վճարել զկեանս մեր ամենայն արդարութեամբ՝ հետևելով լուսոյ շաւղաց և երկնաչու ճանապարհին · ’ի վայրի դալարւոջ բնակեցո́ զմեզ և առ ջուրս հանգստեան սնո́ · զի տեսցէ թշնամին , և ամաչեսցէ զի քո եմք ստեղծեալք և քո եմք փրկեալք · դու́ ես օգնական և ՓՐԿԻՉ մեր , զի բա́յց ’ի քէն զայլ ոք ո́չ գիտեմք և զանուն քո Տէր կարդամք զօրհանապազ · մի́ թողուր զժառանգութիւն քո ’ի ձեռաց քոց , այլ ամենազօր աջ քո՝ լիցի հովանի և պահապան ’ի վերայ պաշտօնէից քոց · բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց քոց · քեզ փառք յաւիտեանս · ԱՄԷՆ ,

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ վասն իմ փշով պսակեցար, և եղեգամբ գանեցար 'ի Հրէից ։ Շնորհեա՛ մեղաւորիս, զի զօրութեամբ սրբազանից քոյոց չարչարանաց զերծանիցիմ 'ի փշոց մեղաց՝ և մերկանայցեմ զամենայն հանդերձս չարութեան ․ և լինիցիմ քեզ Ճշմարիտ երկրպագու՝ մինչ 'ի վախՃան կենաց իմոց ։

## ՇԲՋԱԲԵՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԸՆԾԱՅՍՆ

Նշանակէ զածելն Տեառն Մերոյ 'ի Պիղատոսէ արտաքս առ Հրէայս ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ վասն փրկութեան իմոյ ածիս

*այսր և անդր իբրև զգառն ան-մեղ · և իբրև զորոջ առաջի կտր-չի անմռունչ կաս ։ Շնորհեա մեզ աւուրիս՝ զի ամենայն վշտաց և տառապանաց կենցաղոյս 'ի փառս անուանդ քում սրբոյ՝ առանց ձանձրանալոյ համբերիցեմ ։*

## ԼՈՒԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՁԵՌՍՆ

Նշանակէ զլուանալն Պիղատոսի զձեռս իւր 'ի վկայութիւն անմե-ղութեան Տեառն մերոյ ։

## ԱՂՕԹՔ

Տէր *իմ*՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ 'ի յանիրաւ դատաւորէն Պի-*

ղատոսէ լուացմամբ ձեռաց նորին՝ անմեղ անպարտ գոլ վկայեցար ։ Շնորհեա՛ մեղաւորիս, զի զամենայն աւուրս կենաց իմոց 'ի մէջ զանազան փորձութեանց ալեաց ծովու աշխարհիս՝ անմեղութեամբ կենցաղավարեցից 'ի փառս քո ։

## ՈՂՋՈՅՆ ՏԱԼՆ ՄԻՄԵԱՆՑ

ԱՍԵԼՈՎ.

## ՈՂՋՈՒՆԱՏՈՒԻՆ

ՔՐԻՍՏՈՍ 'ի մէջ մեր յայտնեցաւ

ԵՒ

ԱՍԵԼՆ

## ՈՂՋՈՒ՛ՆԸՆԿԱԼԻ՛Ն

Օրհնեալ է յայտնութիւնն

ՔՐԻՍՏՈՍԻ

Նշանակէ զհաշտութիւն Պիղա-
տոսի և Հերովդէի։

# ԱՂՕԹՔ

ՄԻՋՆՈՐԴ Աստուծոյ և
մարդկան՝ Տէր մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍ-
ՏՈՍ՝ որ ամենաբարի և խաղաղա-
րար միջնորդութեամբ քով հաշտե-
ցուցեր զՀայր ընդ արարածս, և
արարեր խաղաղութիւն երկնա-
ւորաց և երկրաւորաց, հեռաւո-
րաց և մերձաւորաց. և զնոյն
խաղաղութիւն շնորհեցեր Եկե-
ղեցւոյ քո ասելով, զխաղաղու-
թիւն թողում ձեզ, զխաղաղու-
թիւն զիմ տամ ձեզ։ Եւ այժմ
Տէր՝ աղաչեմք զքեզ՝ զերկնաւոր
և զհաշտարար խաղաղութիւն
քո պարգևեա մեզ, զի խաղաղու-

թեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, առանց մեղաց և առանց գայթակղութեան. և սուրբ սրտիւ սիրել զմիմեանս որպէս դու զմեզ սիրեցեր, դընել զանձն 'ի վերայ ընկերին որպէս դու եդեր. և լինել առ միմեանս զթածք՝ քաղցունք և բարերարք, որպէս դու արարեր. հնազանդութեամբ և խոնարհութեամբ ծառայել միմեանց, որպէս դու խոնարհեցար 'ի ծունկս քոյոց Աշակերտացն. որով մարթասցուք լինիլ պատշաճապէս անդամք և մարմին գլխոյդ մերոյ. Իւ դու Տէր ասացեր, թէ ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ ես 'ի մէջ նոցա. Վասն որոյ և մեք ժողովեալ յանուն քո 'ի զաւիթ սուրբ Կա-

Թուղիկէ առաքելական Եկեղեցւոյ, և աստուածային և սուրբ ողջունիւս եղեալ մի անձն և մի սիրտ, ըստ սրբոց Առաքելոցն ։ Լո՛ւր աղաչանաց մերոց՝ մարդասէր Տէր՝ և բնակեա՛ 'ի սիրտ և յոգի ժողովելոցս յանուն քո ։ Սրբեա՛ մաքրեա՛ և յարդարեա՛ զմեզ լինիլ տաճար և բնակարան ամենազօր շնորհաց քոց · Հեռացո՛ 'ի մէնջ զամենայն խորամանկութիւն և զնենգութիւն թշնամւոյն, զի սուրբ սրտիւ և մաքուր մտօք, երկիւղիւ և արդարութեամբ զօրհանապազ փառաւորեսցուք զամենազօր անուն քո, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ քոյով կենարար չարչարանօքդ

պատճառ եղեր հաշտութեան անիրաւաց դատաւորացն ։ Շնորհեա՛ մեղաւորիս, զի 'ի բաց լքեալ զամենայն խռովութիւնս և զվախկոտութիւնս՝ ընդդէմ ամենայն հաւատացելոց եղբարց իմոց, սիրով և խաղաղութեամբ կենցաղավարեցեմ ։

## ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԵՐԵՔՍՐԲԵԱՆՆ

՚Նշանակէ զերգս սուրբ Հոգւոյն, որք Հոգւոյեցին անյարմարապէս ։

## ԱՂՕԹՔ

ՍՈՒՐԲ, Սուրբ Սուրբ Տէր զօութեանց, լի են երկինք և երկիր

փառօք քո։ Սերովբէքն աղաղակեն հրաշալի և հոգեղէն բարբառով առաջի փառաց աթոռոյ Աստուածութեան քո. քանզի զարհուրեալ 'ի հիասքանչ և 'ի հրաշալի փառաց քոց, ոչ ունելով կարողութիւն արժանապէս փառաւորել զանհասանելի մեծութիւն քո։ Վասն որոյ անլռելի և անդադար օրհնաբանութեամբ փառաւորեն զմիասնական Աստուածութիւնդ, զպաշտելի և զհամագոյ Երրորդութիւնդ։ Արդ՝ եթէ հրեղէնքն և իմանալիքն չեն բաւական քոյոյ անբաւութեան, մեք հողանիւթեայքս և յերկիր կործանեալքս՝ զիա՞րդ կարասցուք բովանդակել բանիւ զանբաւելի դթութիւնդ առ արարածս, և մանաւանդ առ

*ազգս մարդկան ։ Որ նախ 'ի սկըզ-
բանն արարչագործ, ձեռամբդ
ստեղծեր զնախնին մեր զԱդամ,
պատուելով զնա քան զայլ արա-
րածս՝ որ բանիւ միայն արարան ։
և յետ պատուիրանազանցու-
թեան պտղոյն ճաշակման, ոչ
արարեր անտես զանկեալ բնու-
թիւնս, այլ ետուր զօրէնս և
առաքեցեր զՄարգարէս՝ յայտնե-
լով զօգուտն ։ Իսկ պատրեալքն
'ի պատրողէն ոչ ծանեան զխոր-
հուրդ բարերար կամաց քոց ։
Ապա Հայրդ երկնաւոր կամելով
յայտ առնել զանճառական
սէրդ, կամակցութեամբ Հոգւոյդ
սրբոյ, առաքեցեր զմիածին և
զծոցածին Բանդ, որ եկեալ
մարմնացաւ 'ի սուրբ կուսէն և
նովին մարմնովն համբերեաց չար-*

չարանաց, խաչի և մահու, և եղե-
քաւութիւն մեղաց մերոց: Վասն
որոյ մեք ընդ Սերովբէիցն երգեմք
նմա ասելով, Սուրբ՝ Սուրբ՝
Սուրբ Տէր զօրութեանց, լի են
երկինք և երկիր փառօք քո՝
օրհնութիւն 'ի բարձունս. օրհ-
նեալ է գալուստ քո յաշխարհս
'ի փրկութիւն մեր ՔՐԻՍՏՈ՛Ս
Աստուած մեր. օրհնեալ է կեն-
սաբեր տնօրէնութիւն քո. օրհ-
նեալ է փրկաւէտ չարչարանք քո,
որով զերծաք 'ի չարչարանաց
և յանչարչարութիւն վիճա-
կեցաք: Օրհնեալ է կենդանարար
մահն քո, որով փրկեցաք 'ի
դառն մահուանէ, և յանմահու-
թիւն երկնից վերափոխեցաք. որ
յաւէժական գոհաբանութեամբ
մատուցուք փառս և երկրպա-

գութիւն բարեբարիդ՝ ՓՐԿՉԻԴ և նորոգողիդ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

## ԿՈՉԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
## ԱՌԷՔ ԿԵՐԷՔ

Նշանակէ զԲանն Պիղատոսի որ ասաց Հրէից, առէ՛ք զդա դուք՝ և ըստ ձերոց օրինացն դատեցէ՛ք ։

## ԱՂՕԹՔ

Օրհնեա՛լ է պարգևատուն կենաց, և պարգևն անմահութեան՝ ՔՐԻՍՏՈՍ Աստուած մեր ։

## ԱՂՕԹՔ
## ՅԵՏ ԱՍԵԼՈՅ
## ԱՐԲԷՔ 'Ի ՍՄԱՆԷ

Օրհնեա՛լ է շնորհն ձրի, և պարգևն անճառելի, կենդանի և

կենդանարար Մարմին և Արեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

# ԱՂՕԹՔ

## ՑԵՏ ՀԱՅՐ ԵՐԿՆԱՒՈՐԻՆ

ՀԱՅՐ երկնաւոր բարերար և բազումողորմ Աստուած, տրուօղ բարեաց և պարգեւիչ կենդանութեան, որ ամենաբարի բնութեամբդ՝ յաղթեցար 'ի մարդասիրութենէ, մինչ զի զհամագոյակից և զարարչակից, զաթոռակից և զհաւասարակից Բանդ՝ առաքեցեր յաշխարհ, առ-

'ի մարմնանալ 'ի սուրբ Կուսէն՝ և նովին անմեղ և՛ անպարտական մարմնովն՝ եղև գին և փրկանք ամենայն աշխարհի · զի ետուր զնա 'ի զենումն, 'ի մահ և 'ի փըրկութիւն, վասն ամենայն հաւատացելոց անուան քո մեծի, Եւ այժմ աղաչեմք զքեզ, միջնորդութեամբ Մարմնոյ և Արեան Միածնի քո հայեա՛ց 'ի հեղումն սուրբ Արեան նորա, և յանշնչութիւն նորա 'ի խաչին, 'ի բացումն փրկական աղբերաց նորա, և յարեամբ թաթաւումն սուրբ Մարմնոյ նորա, և անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբդ քո, զի նորա եմք փրկեալ· խնայեա՛ 'ի գինս սուրբ Արեան Միածնի քո, և ողորմեա՛

*բանաւոր հօտի քոյ՝ յուսացելոցս յանուն քո ։*

## ԱՌ՛ՆՈՒԼՆ ՔԱՀԱՆԱՅԻ՛Ն ԶԸ՛ՆԾԱՅՍ 'Ի ՁԵՌ՛Ն

Նշանակէ զգանելն և զծաղելն Տեառն մերոյ 'ի Պիղատոսէ և 'ի զինուորաց նորին ։

# ԱՂՕԹ՛Ք

## ՅԵՏ ՅԱՄԵ՛ՆԱՅ՛ՆԻ

ԱՐԺԱՆԱՊԷՍ *օրհնեմք ըզքեզ, և արդարապէս գովեմք և գոհանամք զքեն Տէր Աստուած մեր․ որ ըստ բազում ողորմութեան քում անտես արարեր զանարժան գործս մեր, և այսմ շնորհի արժանաւորս կացուցեր,*

վասն միջնորդութեան Մարմնոյ և Արեան միածնի՛ քո. հաղորդս արա փառաց Աստուածութեանդ քո, միաւորելով ընդ դերապատիւ ճոխութեանդ քո։ Վասն որոյ՝ յամենայնի օրհնեմք, և ըստ ամենայնի գոհանամք զքեզ զօրհանապազ. Տէր Աստուած մեր ողորմեա մեզ։

---

## ԽԱՉԱԿՆՔԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ 'Ի ՎԵՐԱՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ

Նշանակէ զբեւեռեալն ՓՐԿՉԻՆ 'ի զինուորաց 'ի Վերայ Սրբոյ Խաչին։

---

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ վասն փրկութեան իմոյ տարածեցեր զբազուկս քո արար-

չարգործս • և 'ի վերայ խաչափայտին բևեռեցար : Շնորհեա՛ մեղաւորիս զի զթաղծեալ սիրտս իմ սիրով ընդ քեզ բևեռեցեմ , և մի երբէք 'ի քէն մեկուսացեալ հեռանայցեմ :

## ԱՂՕԹՔ

### ՅԵՏ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ՀԱ՛Ց կենաց և բաժակ անմահութեան՝ միածին Որդի Աստուծոյ՝ Տէր մեր և ՓՐԿԻՉ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ Աստուած Ճշմարիտ • մանանայդ երկնային իջեալ 'ի վերուստ , եղեր կերակուր ամենայն հաւատացելոց քոց • հեղմամբ Արեան քոյ՝ ողորմեա՛ բանաւոր հօտի քո , շնորհելով զթողութիւն յանցանաց հաւատացելոց • 'ի մահու

*լեր փրկութիւն հաւատացելոց, և արժանապէս ճաշակողաց ըզ-Մարմին և զԱրիւն քո սուրբ։ Յիշեա՛ զփրկաւէտ չարչարանսն քո և զկենսատու մահն, զար-եամբ ճապաղումն 'ի խաչին և զանտանելի կիրսն, զոր ընկալար 'ի մարմնիդ վասն մեր։ Նայեա՛ց 'ի խոցուածս արարչագործ ձե-ռաց և ոտից քոց, և 'ի բացումն կենարար վտակին՝ որով նորոգե-ցան տիեզերք, և արբեցան արա-րածք։ Նովին վտակօքն լուա՛ և մաքրեա՛ զմեզ յամենայն մեղաց մերոց, և թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր։ Խնայեա՛ Արեամբ քո փրկեալ հօտի, կ, ո՛յց արա մեզ 'ի միւսանգամ գալստեան արքայութեան քում, զի մահ-ուամբ և չարչարանօք փրկեցեր,*

ՔՐԻՍՏՈ՛Ս Աստուած մեր՝ բարերար և հորդօղ. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ԱՄԷՆ։

# ԱՂՕԹՔ

## ՅԵՏ ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ՀՈ՛ԳԻ Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ նախ 'ի սկզբանն շրջէիր 'ի վերայ ջուրց, և ստեղ-ծանէիր զարարածս յոչնչէ, և պէսպէս հրաշին գործեցեր յա-ւուրս Մարգարէիցն. և 'ի ժա-մանակի անօրէնութեան էակ-ցին քո՝ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն, լցեր զԱռա-քեալսն բազմապատիկ շնորհօք։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, միջ-նորդութեամբ սուրբ Մարիամայ և

*Արեան փառակցին քո՝ որ բաղմեալ կայ 'ի վեհայ սրբոյ սեղանոյս, էջ 'ի սիրտս և յոգիս մեր, և մաքրեա զմեզ իբրև զԱռաքեալսն 'ի սուրբ վերնատանն, և բորբոքեա 'ի մեզ զկայծ սիրոյ Աստուածութեանդ, զի արժանապէս լիցուք տաճար և բնակարան քեզ և էակից փառակցացդ. և ամենայնօր շնորհիւ քո՝ լիցուք փրկեալք յաւուր նորոգման մերոյ, և քեզ նորոգողիդ Աստուծոյ՝ վայելէ փառք յաւիտեանս. Ամէն։*

## ԿԱՆ՛Ն ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՅԱՋՄԻ ԵՒ ՅԱՀԵԿԻ

Նշանակէ զերկուս աւազակսն խաչեցեալս յաջմէ և յահեկէ Տեառն Մերոյ ։

# ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ վասն փրկութեան իմոյ ընդ-անօրէնս համարեցար. և երջանիկ աւազակին զարքայութիւն քո խոստացար։ Շնորհեա՛ մեղաւորիս զի յելանելն հոգւոյս 'ի մարմնոյս, արժանի լինիցիմ լսել զձայն քո Աստուածային երանաւէտ։

---

## ԱՍԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ՄԵԶ

[illegible] աղաչեն, և ասեն՝ յիշեա՛ զիս Տէ՛ր յարքայութեան քում։

# ԱՂՕԹՔ

ՏԷՐ իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ բացեր զաչս մտաց աւազակին, զի զքեզ Տէր և Աստուած իւր գոլ հաւատայր։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զբացումն աչաց սրտի իմոյ, զի զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ գոլ մի Աստուած հաւատասցեմ․ և արքայութեանդ քում սրբոյ արժանի գտանիցիմ, և ընդ Եկեղեցւոյն խրախուսելով՝ զքեզ փառս և երկրպագութիւնս վերառաքիցեմ։

# ԱՂՕԹՔ

## ՚Ի ԺԱՄՈՒ ԱՌԱՔԵԼՈՑԻՆ

ՅԻՇԵԱ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զուխտ և զժառանգու-

թիւն Եկեղեցւոյ քում սրբոյ, և շնորհեա՛ մեզ զերկնային քո ըզ-խաղաղութիւն, զի մի՛ լիցի 'ի մեզ տեղի և մուտ չարին. հեռացո՛ 'ի մէնջ զամենայն խարդախութիւն թշնամւոյն, և զբռնութիւն նորա խորտակեա՛ բարեխօսութեամբ և յիշատակաւ սրբուհւոյ Աստուածածնին, և Յովհաննու Կարապետին, և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց, Մարգարէից, և սրբոց Հայրապետաց, Մարտիրոսաց, Ճգնաւորաց, Կուսանաց, և ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, որոց յիշատակն և օրհնութեամբ եղիցի 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյս՝ և առաջի սուրբ Պատարագիս. Ամէն.

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո՝ զծնողսն մեր՝ զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցեալս, զվաստակաւորս, զխոստովանողս, զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս։ Եւ որք պատուիրեցին մեզ հաւատալ։ Յիշեա՛ Տէր և ողորմեա։

# ԱՂՕԹՔ

## ՅԵՏ ԳՈՀՈՒԹԵԱՆ

ՅԻՇԵԱ՛ Տէր և ողորմեա՛, և զթա՛ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց, որք ուղիղ դաւա-

նութեամբ պաշտեցին զքեզ, և նովին հաւատով և յուսով ննջեցին 'ի քեզ։ Յիշեա՛ զնոսա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց. դասաւորեա՛լ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն, զի յաւէժական խնդութեամբ և մշտնջենական ցնծութեամբ փառաւորեսցեն զքեզ ՔՐԻՍՏՈ՛Ս, ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՀԱՅՐ ՄԵՐ

Նշանակէ զեօթն բանս, զոր ասաց ՓՐԿԻՉՆ 'ի վերայ խաչին։

# ԱՂՕԹՔ
## ՅԵՏ ՋՈՅԳ ԸՄՈՒԹԵԱՆ
## ՀԱՅՐ ՄԵՐԻՆ

ՏԷՐ *իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ *որ 'ի վերայ խաչին վա՛ն փրկութեան իմոյ ծարաւեցար, և խաչահանուաց քոց աղօթեցեր. Շնորհեա՛ մեղաւորիս զի փրկաւոր քոյով նպաստութեամբ զառնայցեմ 'ի յախտից մեղաց իմոց. և ներելով իմոց պարտապանաց՝ քեզ ճշմարիտ հովուիդ իմում հետև իցեմ:*

## ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼՆ
## ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶԸՆԾԱՅՍՆ

ԱՍԵԼ ՈՂ.

## 'Ի ՍՐԲՈՒԹԻ՛Ն ՍՐԲՈՑ

Նշանակէ զաւանդութեան Հոգւոյն

Տեառն Մերոյ 'ի յԵտոյ Հօր Աստուածոյ 'ի Վերայ Խաչին ։

# ԱՂՕԹՔ

Ո ԵՐԵՒԵԱԼԴ ինձ 'ի փրկութիւն՝ խոստովանիմ Ճշմարտապէս Մարմին և Արիւն ՔՐԻՍՏՈՍԻ Աստուծոյ՝ յուսոյ իմոյ, և աղաղակեմ առ քեզ՝ մեղայ յերկինս և առաջի քո․ սրբեա՛ զիս յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ ։ Շնորհեա ինձ ժամանակ և ցանկութիւն 'ապաշխարութեան․ փրկեա՛ զիս յերևելի և յաներևոյթ թշնամւոյ․ տպաւորեա՛ զօղուան հոգւոյ և մարմնոյ իմոյ ։ Պարգևեա՛ ինձ բարեգործութեամբ և բարեպաշտութեամբ զքեզ արժանապէս Ճաշակել, և փառաւո-

ըեւ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ԹԱՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆ 'Ի ՅԱՆԱՊԱԿԱՆ ԱՐԵԱՆ

Նշան առնէ ձեռին Արեամբ Փրկչին մերոյ:

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ ըստ նախագուշակութեանն Եսայեայ Մարգարէին՝ հնձան հարեր՝ և զհանդերձ մարմնոյ քո ներկեալ արեամբ քով թաթաւեցեր: Շնորհեա՛ մեղաւորիս, զի ճաշակմամբ նոյին մաքրեցիմ յամենայն աղտեղութեանց հոգեկանաց. և խնկութեամբ սիրոյ ընդ

*քեզ՝ մինչև ցկէտ կոչման իմոյ. կապակցեցիմ հաստատապէս ։*

---

# ՈՂԲԵՐԳԱԿԱՆՔ

## ՎԱՍՆ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՀԱՅՈՑ

ԵՒ *արդ Տէր իմ և Աստուած իմ* ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, *ես ամենասխալ և բազում չարեօք և անօրէնութեամբ լցեալ ծառայս քո, արդէն յերկիր խոնարհեալ՝ կորագլուխ անձամբ և մեծակական ողբով 'ի խորոց սրտէ հառաչեմ առ ամենագթած Աստ-*

ուածդ իմ, և աղաչեմ։ Վասն ողորմելի և անտերունչ ազգիս մերոյ աղաղակեմ առ քեզ՝ ո՛վ ողորմելեաց Ողորմած. անտիրացելոց Տէր. անճարացելոց Ճար. անօգնականից Օգնական. անյուսից Յոյս և Ապաւէն. նեղելոց և վշտացելոց հանգիստ և մխիթարութիւն։ Գոչեմ առ քեզ մեծաւ թախանձանօք. բա՛ց Տէր զաչս քո, և տես զողորմելութիւն մեր. տես զփոքրիկ հօտս քո, թէ որպէս է ցրուեալ և տարագրեցեալ ընդ ամենայն երկիր և մատնեալ 'ի ձեռս օտար տերանց և թշնամեաց. զրկեալ 'ի սեպհական բնակութեանց և 'ի հայրենեաց մերոց։

Ո՛հ, զի եմք որպէս զնաւ ղեկաբեկ տատանեալք յալիս ծովու՝

առանց ղեկավարի, և որպէս ոչխարք մոլորեալք 'ի յանապատի առանց հովուի. և ոչ ունիմք զՄովսէս՝ որ առաջնորդեսցէ. և ոչ ունիմք զՅեսու՝ որ ընդդէմ թշնամեաց կայցէ. և ոչ ունիմք զԴաւիթ՝ որ վասն մեր հաճոյական պատարագս մատուսցէ քեզ, և զսուր բարկութեան քոյ յետս դարձուսցէ։ Եւ ոչ ունիմք ըզՄարգարէ, զԹագաւոր և զԱռաջնորդ. և ոչ զօգնութիւն իմն յումեքէ։

Իշխանք մեր և ազատազնեայք մերկացեալք յիշխանութեանց և յընչից՝ և անկեալք ընդ իշխանութեամբ այլոց՝ ծառայեն թըշուառութեամբ։

Հասարակ ժողովուրդքս զրաւեալք 'ի ներքոյ ծանր լծոյ և հար-

կի այլազգեաց՝ հազիւ թէ հայթ-հայթանօք գտանեմք զապրուստըս կենաց մերոց. և զսերմանեալ-սըն և զվաստակս մեր այլք ու-տեն և վայելեն ։

Եկեղեցիք վայելչագեղք և փառաւորք պայծառաշէնք՝ որք յանուն քո և 'ի յիշատակ սըր-բոց քոց սիրելեաց կառուցան, Հոգւոյդ սրբոյ օծմամբն կնքե-ցան, և ամենայաղթ Խաչիդ նշանաւն պսակեցան, յորս մատ-չէր պատարագ Գառնդ Աստու-ծոյ 'ի փրկութիւն աշխարհի, յորս կատարէին սրբազործ և հոգեկեցոյց խորհուրդք քո, յորոց ելանէին և վերառաքէին առ քեզ ձայնք օրհնութեանց և փառաբանութեանց, բուրմունք հոգեւորականք, նուէրք հաճոյա-

կանք և աղօթք հաշտարարք , ահա ըստ մեծի մասին ամայացեալք և ապականեալք՝ զողոց և գազանաց օթարան են եղեալք ։

Ցիրաւի ձգեաց թշնամին զձեռըն ’ի ցանկալիսն քոյ ։ Մտին հեթանոսք ’ի ժառանգութիւն քոյ և պղծեցին զսուրբ տաճարս քո ։ Սրահք և սրբութիւնք նոցա դարձան յապականութիւն ։ Սուգ առին ճանապարհք նոցա ։ Հատան երթևեկք տօնից տարեկանաց նոցա ։ Լռեցին ’ի նոցանէ ձայնք օրհնութեանց և փառաբանութեանց ։ Գազանք և յափշտակօղք մուտ և ել առնեն ’ի նոսա ։ Սքանչելարար դամբարանք և բժշկարար նշխարք սրբոց քոց՝ որք ’ի նոսա , կոխան

եղեն ոտից անօրինոց և պղծոց : Քահանայք և պաշտօնեայք նոցա հալածեալք : Ուստի եղաք մեք մնացորդքս նախատինք դրացեաց և այպն կատականաց թշնամեաց մերոց :

Արդ այս ամենայն եկին և գան 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց : Քանզի մեք մեղաք , անօրինեցաք և ապստամբեցաք 'ի քէն . վասն այսորիկ և դու թոյլ ետուր այս ամենայն չարեաց գալ 'ի վերայ մեր և տիրել մեզ , և մատնել զմեզ 'ի ձեռս թշնամեաց՝ տերանց ապստամբողաց . որպէս ահա եմք տառապեալք 'ի վերայ ամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց : Ուրեմն Աստուծոյդ մերում արդարութիւն . և ամօթ երեսաց մերոց :

Արդ՝ այժմ առ ի՛լ դիմեսցուք՝ ի՛լ Աստուած մեր. և ո՞ւմ պատմեսցուք զցաւս մեր, եթէ ո՛չ քեզ բարկացելոյդ. որ որպէս արդարութեամբ խրատեցեր և հարեր զմեզ, կարօղ ես և դու ողորմութեամբդ անդրէն վերստին բըժշկել և մխիթարել։

Վասն որոյ՝ ահա անկանիմ առաջի անոխակալիդ Աստուծոյ. և ըստ անառակին գոչեմ, մեղաք յերկինս և առաջի քոյ. մեղաք ստեղծողիդ մերոյ. մեղաք բարերարիդ մերոյ և Աստուծոյ։

Աղաչեմ զքեզ անոխակալ Տէր Աստուած՝ դարձիր 'ի բարկութենէ քումմէ և անցի՛ 'ի մէնջ զցասումն քո. մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո. զի աղ-

*քատուցաք յոյժ ։ Զարթի՛ր՝ Տէ՛ր , զարթի՛ր ․ արի՛ և մի՛ մերժեր զմեզ իսպառ ։ Մի՛ մոռանար զաղքատութիւն և զնեղութիւնս մեր ։ Արի՛ Տէ՛ր՝ օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան քոյ , որ կոչեցեալ է 'ի վերայ մեր ։ Մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քոյ․ մի՛ ցրեր զուխտս քո ․ և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ ։ Զի դու միայն ես Տէր մեր և Թագաւոր ․ դու միայն ես ՓՐԿԻՉ մեր և օգնական ․ դու միայն ես ապաւէն մեր և յոյս ։ Զի բաց 'ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք ․ և զանուն քո կարդամք հանապազ ։ Տե՛ս զտառապանս ազգիս մերոյ ․ հա՛ս յօգնութիւն և ա՛յց արա ․*

*Եւ որպէս զԹայիր հնոյ ժողո-*

վերղեանն վասն Աբրահամու, Իսա-
հակայ, Յակոբայ և վասն Դաւ-
թի ծառայից քոց. զթմ և այժմ
Նորոյ ժողովրդեանդ և փոքու-
հօտիդ, վասն սրբուհւոյ Աստ-
ուածածնի՝ անարատ ծնողի քոյ.
սրբոյն Յովհաննու Կարապետին և
Մկրտչին քոյ. սրբոյն Ստեփաննոսի
Նախավկային քոյ. սրբոց Առա-
քելոցն և Մարգարէիցն քոց. և
սրբոց Առաքելոցն և յատուկ
Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի
և Բարթուղիմէոսի, և սրբոյն
Գրիգորի բազմաչարչար վկային
քոյ. և Նորին Որդւոց և Թոռանց՝
ընտրելոց ծառայից քոց. և սրբոց
Հռիփսիմեանց և Գայիանեանց՝
յաղթօղ վկայիցն քոց։ Եւ բա-
րեխօսութեամբ սրբոց Հայրապե-
տաց և Վարդապետաց, Ճգնա-

ւորաց, Մարտիրոսաց, Կուսանաց, և ամենայն սրբոց քոց հնոց և նորոց՝ յայտնից և անյայտից։

Այլ և բարեխօսութեամբ սրբոց քոց երկնաւորացդ՝ Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն անմարմնական դասուցդ։

Զի եթէ վասն բազում մեղաց մերոց և անօրէնութեանց առ ժամանակ մի թողեր զմեզ. դարձուցեր զերեսս քո 'ի մէնջ և տրտմեցուցեր. վասն պատուական արեան քոյ՝ և վասն արդարութեան սիրելեաց քոյ՝ դարձ առ մեզ. և ողորմութեամբ քով մեծաւ ողորմեա՛ց մեզ. և ուրախացո՛ զմեզ՝ որպէս ասացեր առ Եսայեաւ։ Լսեցո՛ և մեզ զայն երանաւէտ ձայնն թէ՝ Լուսաւորեա՛ց Եկեղեցեդ Հայաստանեայց և

ուրախ լեր, զի հասեալ է լոյս քո։ Ահաւասիկ ես դարձուցանեմ 'ի քեզ զխաղաղութիւն իբրեւ զգետ. եւ զմանկունս քո 'ի հեռաստանէ 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն։ Յիրաւի՝ այդպիսի ամենակարող Աստուծոյ ողորմութեան եմք մնացեալ ապաստան՝ ողորմած Աստուած։

Ուրեմն հաշտեա՛ց ընդ մնացորդաց ժողովրդեան քոյ. փրկեա՛ զմեզ մեծաւ սքանչելեօք. ժողովեա՛ զմեզ 'ի գոգ սիրոյդ եւ մխիթարեա՛ 'ի փառս անուան քոյ սրբոյ, որ կոչեցեալ է 'ի վերայ մեր։

Այլ եւ աղաչեմ զքեզ, Տէր իմ եւ Աստուած իմ, վասն ամայացելոց եւ անշքացելոց վանորէից եւ Եկեղեցեաց մերոց։ Լո՛ւր մեզ՝ ահա՛ ննջեալ անձամբք աղաղակեմք,

Մի՛ յիշեր զմեղս մեր, որք բարկացուցաք զքեզ. այլ յիշեա՛ զսուրբսն քո՝ յորոց անուն կառուցան Եկեղեցիք մեր։ Զսուրբ և զմաքուր նշխարս նոցա, որք ամփոփեալք են 'ի նոսա. և զսրբութիւնսն՝ յորոց վերայ անուն քո կոչեցեալ է։

Եւ ոչ եթէ վասն արդարութեան իմոյ արկանեմ զայս աղերս առաջի քո, այլ՝ վասն բազում գթութեան քոյ, և վասն սիրոյ սիրելեաց սրբոց և սրբութեանց քոց։

Ուրեմն՝ աղաչեմ զքեզ՝ ողորմած և գթած Աստուած՝ վասն անհուն ողորմութեան քոյ. 'ի սէր սրբոց Եկեղեցեաց և սրբութեանց քոց, բարեխօսութեամբ քեզ հաճոյացելոց սրբոցն քոց. և

միջնորդութեամբ նոցին չարչարանացն՝ պատուական արեանն, և մաքուր նշխարաց և դամբարանացն. ողորմեա՛ և ա՛յց արա։ Որպէս տառապեցուցեր բարկութեամբդ, նմանապէս բժշկեա՛ և մխիթարեա՛ ողորմութեամբդ։ Զի որպէս տեսին աչք մեր զամայութիւն և զապականութիւն նոցին վասն մեղաց մերոց, տո՛ւր մեզ՝ անսանել վերստին զվերանորոգութիւն և զպայծառութիւն նոցին վասն սիրելեաց սրբոց քոց։

Եւ որպէս հատան և լռեցին ձայնք օրհնութեանց և փառաբանութեանցն 'ի նոցանէ, արա՛՝ զի վերստին զօրացին և բարձրասցին 'ի փառս անուան քո. զի ծանիցեն ամենեքեան թէ՝ կոչեցեալ է անուն քո 'ի վերայ մեր՝

*և նոցա ։ Զորս և մեք տեսանելով՝ վերառաքեսցուք ձայնս և գոհութիւնս 'ի յերկինս քեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։*

## ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ԱՌ
## ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԸՆԾԱՅԻՒ ԱՍԵԼՈՎ 'Ի ՍՈ́ՒՐԲ 'Ի ՍՈ́ՒՐԲ

Նշանակէ զհանգիստն Բանին Աստուածոյ 'ի գերեզմանի Տ՟ր մերոյ յետ իջանելոյն 'ի խաչէն ։

## ԱՂՕԹՔ
## ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՄԲ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ *և հաւատամ, զի դա՛ է ճշմարիտ մարմին և արիւն* ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ՝

Որդւոյն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի :

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ յիջանելն քո 'ի խաչէն՝ հանգեար 'ի գիրկս Մարիամու՝ անարատ Մօր քո, և ցօղով կուսական արտասուաց նորին՝ առոգանիլ հաճեցար : Շնորհեա՛ մեղաւորիս զի զսիրտ իմ մեղամած՝ քեզ կենսատուիդ իմում օթեւան և առագաստ պատրաստեցից, և անդադար զխոցուածս մարմնոյդ՝ ողբալով համբուրեսցից :

## ԱՐԿԱՆԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՄԻ ՄԱՍՆ ԿԵՆԱՐԱՐ ՄԱՐՄՆՈՅՆ 'Ի ԲԱԺԱԿՆ

Նշանակէ զիջումն Հոգւոյն Տեառն Մերոյ 'ի դժոխս առ նախահարս :

# ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ ըստ անճառելի ողորմութեան քում իջեր 'ի դժոխս, միաւորեալ Աստուածութեամբդ առ 'ի սփոփել և վերածել զնախահարս : Շնորհեա՛ ինձ մեղաւորիս, զի 'ի մէջ դժոխոց մեղաց իմոց արժանի լինիցիմ այցելութեանդ, և օգնութեամբ քով յառնիցեմ 'ի մեռելոտի գործոց իմոց · Ամէն :

## ՃԱՇԱԿԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԶՍՐԲԱՐԱՐ ՄԱՐՄԻՆ ԵՒ ԶԱՐԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

*Նշանակէ զԹաղումն Տեառն Մերոյ երեքօրեայն 'ի գերեզմանի ։*

# ԱՂՕԹՔ

## ԵՐԲ ԱՍԻ

## ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

ՄԻԱԾԻՆ որդի Աստուծոյ և Բան Հօր՝ արարիչ երկնաւորաց և երկրաւորաց, և լցուցիչ համայն արարածոց. որ լնուս զամենայն յամենայնի, անպարագրելի գոլով բնութեամբ՝ բովանդակեցար 'ի մարմնի, զի տեսանելի և շօշափելի լիցիս մարդկային ազգի, վասն որոյ ճաշակելի և կերակուր եղեր ամենայն հաւատացելոց, զի տացես զկեանս յաւիտենականս այնոցիկ՝ որք հաւատով և սրբու-

Թեամբ մերձենամ 'ի քեզ՝ ըստ անսուտ խոստման ք՛ո՝ մարգարէր. Եւ այժմ՝ մեք փրկեալքս պատուական արեամբ քո՝ հաւատով տեսանեմք զՓՐԿԻՉԴ մեր բոլորապէս պարունակեալ 'ի ներքոյ կրկին տեսակաց՝ հացին և գինւոյն, հոգւով՝ մարմնով և Աստուածութեամբ. յաղագս որոյ երկրպագութիւն մատուցանեմք փրկողիդ մերոյ, և աղաչեմք զանբաւ զթութիւն քո. Լոյծ զկապ մեղաց մերոց, և ջնջեա՛ զձեռագիր մերոյ անօրէնութեան, բեւեռեա՛ զմեզ յերկիւղ և 'ի սէր քո սուրբ, զի միշտ գնասցուք արժանի կոչմանն՝ յոր կոչեցեր զմեզ. Տո՛ւր մեզ Տէ՛ր՝ բանաւոր հօտի քո, յամենայն սրտէ հետևել միայն զկնի Ճշմարիտ հով-

ուխտ և կատարել զկամս քո , և լսել զերանաւէտ բարբառ քո , աճել օր ըստ օրէ , և պահել զպատուիրանս քո զօրհանապազ ։ Պարգևեա՛ մեզ զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ , զի մի արհամարհեալ լիցուք առաջի քո․ մաքրեա՛ զմիտս և զխորհուրդս մեր, որպէս սրբոց քոց Առաքելոցն , զի ընդ նոսին արժանի լիցուք՝ ըզսուրբ և զսրբարար , զկենդանի և զկենդանարար մարմին և զարիւն քո՝ ՔՐԻՍՏՈՍ Աստուած մեր՝ ճաշակել և ընդունել , յաւուր կենացն յաւիտենից , ընդ ամենայն սուրբս քո , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։

# ԱՂԵՐՍԱՆՔ
## ՎԱՍՆ
## ԽԱՉԻ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՓՐԿՉԻՆ

ԲԱՐԵԲԱՆԵԱԼ Աստուած երկնաւոր, միայն արարիչ, Տէր ամենակալ, մեծութիւն անհեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, սպառումն վհատութեանց, բարձումն պար-

*տեաց, փոխարկէ կարեաց, կարգաւորէ կրից, յարմարէ բանից, սանձարկու լեզուի, շրջագրութիւն ընչոյ, կացուցէ հաղագի, ամփոփէ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցէ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես։*

*Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանդչիս տենչանօք անճառ հրաշիւք յանձինս սրբոց։ Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ զթած․ սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից․*

Ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս 'ի լոյս վերին։ Ձեռնկալու մեծ վստահութեան։ որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանիլ. յուսոյ կերպարան, Ճշմարիտ առհաւատչէիտղա չողայ մատանց յայտնի երեւալ. ապաւինութիւն հանգստեան՝ որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան։ Ազատութիւն շնորհածիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս Ճոխացուցանես։ Պայծառութիւն անստուեր, որ Ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ՝ զթշուառս կրկին

բարգաւաճ ազնիւս ։ Քաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս ՚ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ մերոյին մայելչացուցաներ ։ Հնարաւոր դիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ. եւք վստահութեան առ խոստացելոցն մայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանին ։ Կամք անփոխադրելի առ ՚ի քաւութիւն գերւոյս զօրացեալ ամենազօրելի. անսխալելի դեղ կենաց, որ եւ մեռելոց բնաւին եղծելոց առնես զաքանչելիս ։ Ամենատեղծ աններկրայելի, որ ըզհուրբ կիզեալն եւ զհողմոյ հոսեալն եւ զժանեօք դազանաց ծախեալն՝

՚ի քթթել ական նոյին հիւթականութեամբ անպակաս յարուցանես ։ Անհաւասար համարձակութիւն, յորում Աստուածորէն պանծանօք պարծելն է իրաւացի ։

Հայեա՛ց Տէր յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա՛ անդորր հանդստական դիւրաւոր ՚ի բազմատաղնապս հեծութենէ ։ Եւ զյարուցեալ զումարս սատակչացն, եթէ սպառ աղէնք այսական դժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց ողեղ և քո ատելի կերպարանօ, եթէ ցաւոց և ախտից վտանիչ և կորստական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանես-

ցես և հալածեսցես հեռի սահ-
մանաւ խսպառ տարագրեալ ան-
դարձ որոշմամբ վերստին կորըս-
տեանն. և կառուսցես կացուս-
ցես նպատակ կենաց և ամուր
մահարձան զնշան Խաչիդ ապաւի-
նելոյս ’ի քեզ փրկութիւն, Եւ
յայսմ՝ անպարտ և անպատիր և
անվանելի արուեստից ահաւորիդ
մեծութեան լուծցին որոգայթ-
քըն դաղտնածածուկ սատանայա-
կանք, կապտեսցին մեքենայքն,
վատնեսցին դայթակղութիւնքն,
խայտառակեսցին հաղբիցն դըրու-
թիւնք, յայտնեսցին երևոյթք
որսոյն, զայցին նենգողին ծու-
ղակք, վերասցին վարմին վերար-
կուք, առչորեսցին որոմանցն
բոյսք, նզովեսցին բռնաւորին
չարաբանութիւնք, կտրեսցի լար

*խաբէութեան 'ի մահ որսողին, պարսեսցին պատրողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տոռունք տագնապողին։ Այլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեսցին խորտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն, բաժանեսցին ազինք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին ամրոցք ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրեւք. հալեսցի եւ ցամաքեսցի եղեամն աղանդաւորին։ Խորտակեսցի եղջիւր դոռոզին, մանրեսցին ամբառ-*

նալէք զրօշիցն կերպարանաց , փշրեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն , նահանջեսցին զինեցմունք ճակատելոցն , քակ-տեսցին միաբանութիւնք զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք և եթէ մարմնաւորք , փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց յեւթն տարակոյս . 'ի գուբն ինձ փորեալ ինքեանք ընկճեսցին : Ցեղանակեսցին ձմերունք ձանձ-րացուցչին . հատցի կապն կցոր-դութեան մշտաջան աւազակին . նողկասցի մատոյս կայից համբոյր շողոքորթին . ընդ միջեալ մեկնեա-ցին նենգաձգութիւնք նենգչին . կասցէ 'ի սատանման նաւ խար-դախողին . խլեսցին յարմատոց անտի սատմունք խածանողին :

Վան փայտից օրհնութեան

կենաց՝ յորում պրկեցար Աստուածդ անըմբռնելի • յեշատակաւ բեւեռացդ՝ որով 'ի գործի մաՀուն մածուցար արարիչդ երկնի և երկրի , արեամբդ տէրունականաւ՝ որով զվիշապն մեծ՝ կարթիւ ածեալ որսացար , լեզւոյն դառնութեամբ զօր արբեալ , զդեղատուութիւն կորուսչին արտաքս Հեղեր , պատմաբանութեամբ ըղձական ձաւից կրիցըն սարսափելեաց՝ որով զըբռութիւն Հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր • անուամբդ անՀասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ՝ յորմէ դողան և դատապարտին ոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երևութից և աներևութից • եղիցին այս ամենայն պար-

գև.ք շնորհաց խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութիւն և 'ի քաւութիւն։ Եւ մահաբեր դառնաթոյն օձին, և որ 'ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւնն, 'ի սատակումն եղիցի նորին. նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սովաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի։ Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ողւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի։

Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց զոհման աղօթից հայցման ծերոյս և տղայոյ, կուսի և երիտասարդի. և եթէ յաղախնեաց ոք պաղատեսցի աստուածսիրաբար, հաւա-

սարապէս անաչառութեամբ ըն-
կալցին 'ի քէն մասն երանու-
թեան պարտուց ազատութեան,
հաստեալ մերատին յանարատու-
թիւն նորոգ մաքրութեան, նկա-
րեալ դարձեալ զքոյդ կերպա-
րան անփոփոխելի։ Ահա՛ տիրա-
պէս հնարաւոր, զօրեղ, անպա-
տում, անհաս, անիմանալի,
տեսցես սատանօր 'ի հառաչանս
կողկողանաց այսր հեծութեան,
որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ
քեզ մատուցանի, վասն Հօր քո
երկնաւորի և բարերարի, և Հոգ-
ւոյդ սրբոյ փառակցի և կեն-
դանատուի, Աստուածածնիդ
բարեխօսութեամբ և խնդրուա-
ծովք ամենայն սրբոց։ Զի դու
ստեղծեր զամենայն, և 'ի քէն
եղեն ամենայնք, և դու տիրես

ամենայնի · և քեզ փառք յամե-նեցունց, մինչ յիսկութենէ ան-ժամանակ Երրորդութեանդ՝ զու-գակցապէս փառաւորեալ յան-բաւս, և յաւիտենից յաւի-տեանս · Ամէն ։

## ԵՐԳԵԼՆ ԴՊՐԱՑ ԶՏԱՂՍ

Նշանակէ զխնդութիւն ուրախ-ութեան աշակերտաց վասն յարու-թեան Տեառն մերոյ ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ որ քոյով փառաւոր յարութեամբդ՝ զհաւատացեալս քո ընկերեցու-ցեր ։ Շնորհեա՛ մեղաւորիս՝ զի 'ի յարութեան յաւուրն յետ-նում, արժանի լինիցիմ ընկերել

և ուրախանալ ընդ պարս երջանկաց և երանելեաց յարքայութեան քում. Ամէն։

## ԴԱՌՆԱԼՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԸՆԾԱՅԻՒՆ ԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՍԵԼՈՎ. ԿԵՑՈ՛ ՏԷՐ

Նշանակէ վերջին Տէառն մերոյ էջ Յարութեան խորոյ։

## ԳՈՀՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱ՛Ծ մեր, և Տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն։

Դ. ԺԱՄՈՒ ԳԱՏԸՐԱԳԻ

# ԱՂՕԹՔ

## ԵՐԲ ԱՄԻ ԼՑԱՔ

ԳՈՀԱՆԱՄՔ զքէն՝ Հա՛յր ամենակալ, Որդւոյդ միածնի, և Հոգւոյդ ճշմարտի, որ ընտրեցեր զհաւատացեալս անուանդ քում սրբոյ, 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս. և տացար քեզ ժողովուրդ սեպհական, և արարեր հաղորդ փառաց Աստուածութեանդ, և ժառանգորդ անճառ բարութեանց քոց. ոչ ըստ մերում արժանաւորութեան, այլ ըստ անբաւ գթութեան քո, որ միշտ շնորհես առատապէս և ոչ նախատես. փոքր պահանջես, և մեծամեծս պարգևես. Այո՛ օրհնելով օրհնեմք և գոհանալով գոհա-

*նամք զքեն Տէր Աստուած մեր, որ յայսմ մասին զմեզ արժանաւորս կացուցեր ։ Աղաչեմք զքեզ, մի՛ թողուր զմեզ 'ի ձեռաց քոց՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան · և եկեսցէ ողորմութիւն քո 'ի վերայ մեր զամենայն աւուրս կենաց մերոց · և եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։*

---

## ԱՍԵԼՆ ·ՔԱՀԱՆԱՅԻՆ ՕՐՀՆԵԱ́Լ·Ք ԵՂԵՐՈՒ·Ք

Նշանակէ զօրհնութիւն Տեառն մերոյ, զոր ետ հաւատացելոց իւրոց 'ի համբառնալն յերկինս ։

---

## ԱՂՕԹ·Ք

Տէր *իմ* ՅԻՍՈՒՍ ·ՔՐԻՍՏՈՍ՝ *որ 'ի համբառնալն քո 'ի յերկինս՝*

օրհնեցեր զհաւատացեալս քո՝ խոստանալով Նոցա զմխիթարիչ սուրբ Հոգին ։ Շնորհեա՛ մեզաւորիս զի յամենայն խորհուրդս, ՚ի բանս և ՚ի գործս իմ, օրհնութեան քում Աստուածայնոյ և շնորհաց Հոգւոյդ սրբոյ արժանի լինիցիմ . Ամէն ։

# ԱՂՕԹՔ

## ՅԵՏ ԱՒԱՐՏՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ՍԿԻԶԲՆ և կատարումն ամենայնի Ա՛ստուած, որ ամենայն բարի ՚ի քէն սկսանի և քև կատարի, և ՚ի քեզ բովանդակի ամենայն, ՚ի վախճան աղօթիցս՝ ողորմեա՛ մեզ, և լե՛ր ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց . և եղիցի

ամենազօր աջ քո պահապան մեզ յամենայն ժամ 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի ննջել և 'ի յառնել. և զամենայն գործս մեր 'ի բարին կատարեա՛. Ամէն ։

## 'Ի ՀԱՄԲՈՒՐԵԼ ՋԱՋ ՊԱՏԱՐԱԳԻՉԻՆ

## ԵՐԳ.

ՅԻՇԵՍՑԷ Տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ ։

## ԱՂՕԹՔ

## 'Ի ՍԿՍԱՆԻԼ ԳՈՐԾՈՑ

ԶԳՈՐԾՍ ձեռաց մերոց

ուղեղ արա 'ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ ։

# ՀՈՐԴՈՐԱԿ
## ՆԱԽ ՔԱՆ ԶԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց՝ զգրութիւն թուոցս յարմարեցի կական և հեծութիւն, հառաչանք կողկողագինք, դառնութեան լալումն և արտասուաց երգք ։ Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար՝ զգաղտնածածուկն յայտնաբարբառ ։ Զի անդրադարձութեամբ

սկզբմամբն և վերջնաւորօքն բառիւք , զնոյն համաձայնութիւն ՚ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեամբ՝ աստանօր եդից ։

Մեղայ մեծիդ բարերարութեանդ՝ անարգս մեղայ ․ մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ ․ մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև մեղայ ․ մեղայ սիրոյդ վերնում գթութեան՝ յայտնապէս մեղայ ․ մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ ․ մեղայ գերունակ զօրոյդ գրգանաց՝ անբաւս մեղայ ․ մեղայ աննուագ լուսոյդ փայլեման՝ նենգօղս մեղայ ․ մեղայ ճաշակման անճառ կենաց՝ բազումս մեղայ ․ մեղայ անհաս պարգևացդ ձրից՝ հանապազ մեղայ ․

մեղայ զօրհնեալ մարմնոյդ Աստուծոյ՝ մահու չափ մեղայ • մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ խնկապէս մեղայ ։ Ահա՛ արդարև օրհնեալ է հաստատած բանի յուսադրական սրտի այսր մեղայի , սոյն սա՛ պատուելի աւանդ • անմոռաց պատուէր , հայրենեացն տուր , նախահարցն՝ օրէն , համայնից թօշակ , անհերքելի բան , զօրաւոր պատասխանի , կենդանութեան կամուրջ , ախորժելի վերնոյն , սիրելի սրբոց , անխզելի կապ , հրաշալի բարբառ , անշրջելի պատճառ , բաղձալի աղերս , փափագելի սեղան , սրտարեկ հընչումն , անհնարից ճարակ , կարծրութեան վանիչ , Աստուածապաշտից սահման , հեթանոսաց դիրք , վաղնջուց կանոն , Քրիս-

տոնէից հարազատ , արարչու-
թեան յաղթօղ , անջրպետ հզօր ,
խորոց աչաւոր , արուեստ բարձ-
րութեան , խորութիւն անչափ ,
հիացման տեսիլ , խորհուրդ կն-
քեալ , ընդ որ չիք ումեք անցա-
նել , եթէ ոչ անըմբռնելի մտաց
արարչմամբ զատ ծանիցէ : Զայն
բարեպատեհ հրաշաւորական՝ որ
ոչ յիշատակեցաւ 'ի մերջին դա-
տակնիք դասուն լսելոյ · զուցէ
ա- նմին խզեալ համառօտ ըղ-
վըրժակն իրաւանց մահուն հա-
սելոյ , յորմէ ընտրութիւնն ա-
պագործ եղեալ , զսահմանն յա-
ւիտենական քակտեսցէ : Զարդ-
փառացն մեծութեան , որչափ նոյն
ինքն Աստուածութիւն պատ-
կեալ բարգաւաճի : Քանզի մի
ոք դիմեալ կալաւ զեղջերուաց սե-

ղանոյ այսր զրրութեան , և ոչ առ ժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ գտաւ ։ Իսկ եթէ Աքար զարմեան՝ և Սաւուղ կիսեան՝ և Յուդա Սիմոնեան , ասելով զոյն ոչ արդարացան , և Ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի , զի յակամայից բռնադատելոց ոչ է կատարեալ սէր , ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն ։ Իսկ ես կամաւ համբուրեմ զարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս ։

Մեղայ երախտեացդ մոռացութեան՝ վերստին մեղայ ․ մեղայ մարմնոյ ձեռն յաղի հարեալ՝ յիմարս մեղայ ․ մեղայ առ կեանդ զժրողութեան՝ իսկ և իսկ մեղայ ․ մեղայ բանից ապախտ առնելոյ՝

չարաչար մեղայ․ մեղա՛յ ՚ի յօր սաստակման ինձէն ստեղծեալ՝ վաստաթարս մեղայ․ մեղա՛յ պարտականս անկենդան մահուն՝ ծաղելիս մեղայ․ մեղա՛յ անպատկառս քո բարձրութեան՝ տաղտկալիս մեղայ։ Վերջին ինձ կրկին աշխար հոգևոր․ զի ՚ի կորուստ և ՚ի կործանումն ինձ երևեցայ, զի անդարձս վարատեցայ, զի որդիս՝ թշնամի գրեցայ, զի ՚ի բարձանց երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիզի։ Եւ ես առ սմին ողբք աղաղակի, զի անծամբ զանձրն անարգեցի, զի բազում կորուսչին զատայ։ Այլ իմն կոկիծ դժնդակ սրտի, զի զիմ ունին՝ առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զըռեալ որմս զարշունակ, զոյն պար-

ծանօք պաճուճեալս , զլոյսս ՚ի մուայլ շրջեալ , զգերանակիր ակնս թշուառացեալ , զջահս փառաց շիջեալ , զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք մխասակարս , առ անօրինականան տէրութեանս , առ յայտնութիւնն Աստուածայինն , առ երեւմունն արարչագիրս , առ խոնարհութիւնն սարսափելիս , առ այն զոր տեսի իսկ աչօք իմովք , առ որ մեծ է պատասխանատուութիւնս քան առ համօրէն Աւետարանն , զարմանս , հիացմունս • հոգս հալողականս , անդաճմունս անհնարաւորս , թուլականութիւնս մտաց անբարդելիս , եռմունս անկատարս , իջմունս անհաստատս , յուսահատութիւնս յարմարականս , յանդիմանու-

թիւնս պատշաճականս, ձայնս պատեհագոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս։

Արդ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութիւնք։ Իսկ քանզի կարօղ ես զայս ամենայն զպարտս թողուլ, և ըղխայթուածս մահու բժշկել, Տէր ողորմութեանց, Աստուած բոլորից, ՔՐԻՍՏՈՍ թագաւոր բարձրեալ Հօր Որդի, առեղծիչ գթած բարերար, օրհնեալ առատ հարուստ, աճաւոր հզօր ողորմած, տեսուչ ձեռնկալ հաստիչ, ապրեցուցիչ զարմանիչ կեցուցիչ, երկայնամիտ անոխակալ, ապաւէն, բժիշկ զովեալ երկնաւոր, անճառ լոյս կեանք, յարութիւն նորոգութիւն քաւութիւն, եթէ

*հայեսցիս մարդասիրութեամբ , ըստ որում քոյդ են սովորութիւնք , նայեցեալ 'ի քեզ կողկողիմ և ես . եթէ լուիցես , հառաչեմ . եթէ ունկն մատուցանիցես , պաղատիմ . եթէ անսայցես , աղերսեմ . եթէ ներեսցես , աղաչեմ . եթէ առիս դառնայցես , գոչեմ ։ Ապա եթէ անտես առնիցես , կործանիմ . իսկ եթէ առ ոտն հարկանիցես , լամ . եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես , մեռանիմ . ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես , սատակիմ . իսկ եթէ սաստեսցես , դողամ . եթէ խեթիւ տեսանես , սոսկամ . ապա եթէ սպառնաս , սարսափեմ . եթէ հալածես , հեծեմ . իսկ եթէ ընդ վայր հարկանիցես , հերքիմ . եթէ զողբոց վհատութիւնս ոչ*

առցես, տաղնապիմ. եթէ խատանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգին ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ. Զբարեացն պարգեւ մատնեալ, զերանութիւնն թողեալ, զշնորհն լքեալ, զուխտն ցրուեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զառեղծիչն էիցս բարկացուցեալ, զանձառութիւն շնորհին ընդոտնեալ, ըզպատուոյն պատկեր աղաղեալ։ Իսկ եթէ առ այս խեղդ մահուհեծութեան ցաւոյ մարդասի-

*րեալ՝ առ իս ժամանեցուսցես , Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ , զաղ-դեալն զիր լնանիլ 'ի յիս , եթէ բժշկութիւն զադարեցուցանէ զմեղս մեծամեծս , որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ 'ի քեզ , զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին զտեսալ պնդեցայց քաւեալ , և ստեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց . և քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք յաւիտեանս . Ամէն .*

# ԶՂՋՈՒՄՆ

## 'Ի ՍԿԶԲԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ՄԵՂԱՅ ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։ Մեղուցեալ եմ Աստուծոյ ։ խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և սրբուհւոյ Աստուածածնին՝ և առաջի քո հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ ։ Քանզի՝ մեղայ խորհրդով բանիւ և գործով · կամայ և ակամայ · գիտութեամբ և անգիտութեամբ՝ մեղայ Աստուծոյ ։

Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա · մտօքս և շարժմամբ սորա · մարմնովս և զգայութեամբ սորա ։ Մեղայ զօրութեամբ հոգւոյս · խո-

բամանկութեամբ · անզգամու-
թեամբ · յանդգնութեամբ և
երկչոտութեամբ · շռայլութեամբ
և ժլատութեամբ · զեղխութեամբ
և անխրատութեամբ · չարահա-
ւանութեամբ · յուսահատու-
թեամբ և թերամտութեամբ՝ մե-
ղայ Աստուծոյ ։

Մեղայ չար խորհրդով մտացս ·
նենգութեամբ · ատելութեամբ
խեթիւ · մախանօք · յաչախա-
նօք · թուլութեամբ · պոռնկա-
կան խորհրդով · արուական ·
իգական · անասնական · դրաս-
տական · զազանական · 'ի գիշերի
և 'ի տուընջեան · երազական գի-
ճութեամբ և յանրջական զարշ
աղտեղութեամբ՝ մեղայ Աստու-
ծոյ ։

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս ·

հեշտութեամբ․ պղերգութեամբ․ յօրանջմամբ քնոյ՝ շարժութեամբ մարմնոյս և զազրագործութեամբ ՚ի պէսպէս ախտս․ հեշտալրութեամբ լսելեաց․ արատութեամբ աչաց․ ցանկութեամբ սրտիս․ խզութեամբ ռնգաց․ պաղշոտութեամբ բերանոյս․ անժուժկալութեամբ․ շուայտութեամբ և արբեցութեամբ՝ մեղայ Աստուծոյ։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս․ ստախօսութեամբ․ սուտ երդմամբ․ երդմնազանցութեամբ․ հակառակութեամբ․ վիճաբանութեամբ․ բանսարկութեամբ․ շողմոգութեամբ․ քսու․ դատարկաբանութեամբ, և ծաղու․ զրախօսութեամբ․ հերձախօսութեամբ․ և անիծաբանութեամբ․

տրտնջելով․ զժգոհելով․ բամբասելով․ և հայհոյելով՝ մեղայ Աստուծոյ ։

Մեղայ զողութեամբ ձեռացս, ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, և ընդ զարշս ածելով՝ մեղայ Աստուծոյ ։

Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս․ եօթնեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս ։ վերամբարձ ամբարտաւանութեամբ, և վայրաքարշ մեղկութեամբ․ յաջ և յահեակ խոտորելով․ առաջնոցն մեղանչելով, և վերջնոցն չար նշանակ գոլով՝ մեղայ Աստուծոյ ։

Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք ։ Հպարտութեամբ և մասամբք նորին ։

Նախանձու և մասամբք նորին ։ Բարկութեամբ և մասամբք նորին ։ Ծուլութեամբ և մասամբք նորին ․ Ագահութեամբ և մասամբք նորին ։ Որկրամոլութեամբ և մասամբք նորին ։ Բղջախոհութեամբ և մասամբք նորին ։ մեղայ Աստուծոյ ։

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ ․ յանձնառելեացն և հրաժարելեացն ․ զի ոչ զյանձնառականսն կատարեցի և ոչ 'ի հրաժարելեացն հեռացայ ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ ․ 'ի կարգս Քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ ․ զխոտերով զչարն՝ կամաւ կորացայ ․ և 'ի բարեաց գործոց ինձէն հեռացայ ․ վա՜յ ինձ ․ վա՜յ ինձ ․ վա՜յ

ինձ ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ․ զի՛ անթիւ են յանցանք իմ․ անասելի են անօրէնութիւնք իմ․ աններելի են ցաւք իմ․ և անբժշկելի են վէրք իմ, մեղայ Աստուծոյ ։

## ՅԵՏ ԽՈՍՏՈՎԱՆԵԼՈՅ ԶՄԵՂՍ

ԲՆՆՕ́Ղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամայ և ակամայ՝ գիտութեամբ և անգիտութեամբ․ Թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի Աստուածութեան քո․ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս․ և ողորմեա՛

քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս ։

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ որ առեալ է քեզ՝ արձակեսցես զիս 'ի կապից մեղաց իմոց , աղաչեմ զքեզ ։

## ՀԱՌԱՋԱՆՔ
## ՁԿՆԻ
## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Եւ քանզի երջանիկքն և փառաւորեալք ուրոյն պարք , յորոց ոմանք զոյգն ինչ զթեցին և յաճախագոյնս հաստատեցան , փաքունս սասանեցան և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն

մաքրութեամբ լուսաւորեցան · յորոյ մինն զգանգուածոյն յայտնէ զհասարակաստեղծն տկարութիւն · իսկ միւսն զգերազանցն քան զբնութեանն օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշտակականս ։ Եւ արդ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ Աստուածութեան հօրն ՔՐԻՍՏՈՍԻ, ընտրեալքն, առնեալքն, խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս ՔՐԻՍՏՈՍԻ պաշտեցեալք, և իբրև զօթեվանս Հոգւոյն սրբոյ յարդարեալք, յորս չէք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութիւն և լուսաւոր արդարութիւն, և որքան մարթ է զմարդն Աստուծոյ՝ Աստուծոյ նմանեցուցանել ։ Երեսք պարզք

և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անըստգտանելիք, պաշտօն առ Աստուած կարծր և անփոխարկելի, ընթացք արիականք և անկասելիք, ճշմարտութիւն միատարր և անցնդելի, դիմադրութիւն զօրեղ և անհերքելի, տեսութիւն պայծառ և անապշելի, իմաստասիրութիւն վերնական և անկոխելի, պատկեր մաքուր և անաղարտելի։ Զորոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ Աստուած իսկ վարդապետեսցէ, և նոքօք հաճութիւն 'ի մէջ խռովութեան՝ արարչել բան լուսաւորեաց։

Այլ ես անպիտանս յամենայնի, և որքան զօրէ պարաւեալս,

որ մինչդեռ արթունս եմ՝ նիրհեմ, մինչդեռ զգաստ երեւիմ՝ թմբրիմ, 'ի բարեպաշտուս իմում գայթագղիմ, մինչդեռ աղօթեմս՝ և վրիպիմ, 'ի յընթանալս իմում և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ, 'ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ, մինչդեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյս հակամիտեմ, 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեանն ճաշակ՝ օշինդր խառնեմ, ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ, ընդ կանգնելն և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ· ասեմ և ոչ առնեմ· խոստանամ և ոչ կատարեմ· ուխտեմ և ոչ վճարեմ· կարկառեմ և

անդրէն ամփոփեմ · ցուցա-
նեմ և ոչ ընծայեմ · մերձեցու-
ցանեմ և ոչ մատուցանեմ ։
'ի ճարակել խոցուածոյս անդ-
րէն վերաւորեմ , 'ի հաշտեցու-
ցանելն՝ վերստին խռովեմ · զուր
հանդիսանամ և իրաւամբք պար-
տաւորիմ · դրիմ և խոկոյն եղ-
ծանիմ · նաւեմ և 'ի գիծն
թուլանամ · սկսանիմ և 'ի հան-
գիստն ոչ ժամանեմ ։ Կարդիմ
և դարձեալ սասանիմ · լնանիմ
և կրկին հեղում · շարունակիմ
սատ՝ և անդ 'ի ստորեւս հոսիմ ·
բարդիմ և անդէն տոչորիմ ։
Հիմն արկանեմ և ոչ զլխաւո-
րեմ · սակաւ վաստակիմ և բիւ-
րըս վատնեմ · դոյզն չանձեմ և
անթիւս սպառեմ · զայլս խրա-
տեմ և ես ինքն անփորձ եմ · միշտ

ուսանիմ և երբէք 'ի ճշմար-
տութիւն գիտութեան ոչ հասա-
նեմ։ Զշինջեալ չարիսն նոյն-
չափ արծարծեմ. սուղ ինչ քա-
ջալերիմ և առաւելապէս լքա-
նիմ. լարիմ և իսկ և իսկ առնմին
մեղկիմ. զայս կարկատեմ և զայն
պատառեմ. խլեմ զեղիճն և
տատասկ տնկեմ։ Ընդ ամբառ-
նալն և այսրէն բերիմ. մտանեմ
'ի բոյնն աղաւնի և անտուստ
ագռաւելանեմ. զամ սակաւ մի
սպիտակ և սրանամ դառնամ
բնութին սևացեալ. առեմ զիս
քեզ դաւանել և սպանողին նուի-
րիմ. ընդ յանդիման լինելն և
թիկունս դարձուցանեմ։ Մաք-
րիմ և այլ մրճոտիմ. լուանիմ
և նոյին զաղբանամ. կերպա-
րանիմ զՔաւթին և գործս զՍա-

ւուղայն կատարեմ ․ շրթամբք ճշմարտեմ և սանձ՝ երիկամամբք ․ աջովս մատակարարեմ և ահեակ կողմամբս աւերեմ ։ Ընդ երկրագործութեան ցորենոյն՝ որոմն սերմանեմ ․ 'ի բարձրագոյն իմաստիցն 'ի վայր իջեալ , ես ինքն գտանիմ ։ Հրեշտականամ յերեսս և 'ի խորհուրդս դիւանամ ․ 'ի յոյս հաստատիմ և 'ի միտս տատանիմ ․ սուտ ձևանամ և իրօք խոտորիմ ․ կեղծաւորիմ արդար և արդեամբք ամպարշտեմ ։ Դասիմ 'ի պարս հեզոց և ընդ այսս կաքաւեմ , 'ի մարդկանէ գովիմ և 'ի տեսողէդ պարսաւիմ ․ 'ի հողածնելոյս երանիմ և յորդւոցն լուսոյ աւաղեմ ․ հաճոյանամ յետին ռամկին և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ ։

Զատեանն դատաւորին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ․ հերքեալ 'ի վեհից, սոսկականացն սպրդեմ․ մարմնոյս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնեճային ճանաչիմ․ հպաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր և վաղիւ մոլի խելագար․ զտէրունի պատուէրն լքեալ, թելադրութեան օձին հետևիմ․ արիանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ․ ըզծանրութիւն աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն անմասն եղանեմ․ 'ի բացուստ ճոռոմս խօսիմ, և 'ի պատասխանատուութեանն պահու պապանձեալ կարկիմ․ 'ի յելս արևուն հարուստ երևիմ և ընդ երեկոյս ունայն դեգերիմ։

Յաթոռս ծերոյ բազմեալ, և խելայեղեցն կցորդեցիմ. ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ զարթնում։ Զանդաստանս կամացս չարաչարս հերկեմ, փոյթ խնամով 'ի չարիս, միշտ անառակ որդիս, անդարձ տարագրեալս, անզղջական զառածեալս, անմխիթար տրտմեալս, ինքնագրաւ գերեալս, մահու և ապականութեան ծառայեալս, անողոքելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուաստելի հատուածեալս, անարծարծելի շիջուցեալս, անկազդուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս։ Եւ եթէ պարտ է զստուգին աստանօր ասել անօրինեալս անձին նախատինս. ահա գրեմ զրեմ և ոչ անխայեմ զեր-

ռիւսնիւթեալ գեհենին ։ Ստացուածս նախանձու նորայս Ադամայ երկնայնոյ , որպէս և Կայէնն առաջին հնոյն և հողեղինին · որ ունիմ զբնաւն աստուած 'ի յանձին փնշանակ ամբաստանութեանս , ո՛չ զշնչոյս տուրևառութիւն , այլ զբանիցս կշտամբութիւն ։

Եւ արդ ո՛ւր իցեն փրկութիւքն , ուր սկզբնահայրն հաւատոց 'ի յուսահատութեանն վայրի զանգթութեանն իմ չարիս կրկնէ , մեծն Մարգարէից՝ քարամբք բանից կոչկոճէ , արին բարեփառ աշտէին նիզակաւ 'ի մահ սատակէ , պատկեր ճշմարտին ընդ Աքարու համայնիւ քնջէ , Աստուածարեալն վէհից՝ յարապողացն վթիժուց մատնէ ,

Մարգարէածին տեսանօղն՝ ընդ Ամաղեկացւոյն առաջի Տեառն սպանանէ, Նախանձաւորն Աստուծոյ՝ երկնատեղաց բոցովք վառանէ, սուսերին լռումն և Նորայս ակիզբն՝ հեծանոցին ընտրութեամբ հասէ, պետն Առաքելոց ընդ Սամիրայի 'ի կենաց զրաւէ, զարմանալին քննութեամբ հոգւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ կենացն քարոզ խառնէ: Արդ անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժգնութեան հրամանի վերնոյն արի սպառազէնք. ընդ հրեշտակային և մարդիկ, ընդ տիեզերաց երկրի և տարերք, ընդ անզգայից և շարժողականք, որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք լքկանաց յօրինակ և յիշատակ սոսկալեաց ապագայից:

*երբ հողմով փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վստահութիւն, մնայ անկայուն 'ի հաստատութեանց ։ Զոր եթէ ոք իմաստութեամբ 'ի քնին առեալ խուզեսցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութիւն, զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց թուոյ և քանակութեան համարոյ թինդս առեալ անրաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմինս ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանագրութիւն ։*

*Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր բարի երկնաւոր մարդասէր* ՔՐԻՍՏՈՍ, *Աստուծոյ կենդանւոյ միածին Որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ քա-*

ուիչ ահաւոր, սաստեմ 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոդւոյս ծփանաց · արձանացո՛ զծարաւս մոլեգին շարժման սրտիս խռովութեան · ընդոտնեմ 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման զցնդեալ մտաց վայրագութիւն ։ Եղիցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամենավարան բքոյս սաստանման, սատակեմ խափանեմ զբազմազլխեան անդամս ուրուականս դաղտնեաց ամօթոյս երկրակենցաղս հինից ։ Գրեսցես աղօթս մշտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի ։ Հա՛ն 'ի խորոց մաշուս անդնդոց չքնաղ ապրեցեալ ընդ Մարգարէին փրկելոյ · ընկա՛լ զխոստովանու-

թիւն անձնադատ բանիս 'ի հոտ անուշից․ շնորհեա՛ մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս ։ Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս․ Ամէն ։

# ՍԱՂՄՈՍՔ
## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս , և մի բարկութեամբ քով խրատեր զիս ։

Ողորմեա՛ց ինձ Տէր զի հիւանդ եմ ես․ բժշկեա՛ զանձն իմ , զի խռովեցան ոսկերք իմ ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ․ և դու Տէր , մինչև յերբ ։

Դարձ Տէր, և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր վասն ողորմութեան քում։

Զի ոչ ոք է՝ որ 'ի մահու յիշէ զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ, և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

'Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց. և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն՝ եւ խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն յոյժ վաղվաղակի, եւ խռովեսցին։

Փառք Հօր, եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԵՐԱՆԻ ում թողութիւն եղեւ մեղաց, եւ ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն՝ որում ոչ համարի Տէր զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա։

Լռեցի ես՝ եւ մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանապազ, ՚ի տուէ եւ ՚ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո ՚ի վերայ իմ՝. դարձայ ՚ի թշուառութիւն զի հարան յիս փուշք։

Զմեղս իմ ցուցի քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի 'ի քէն։

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ· և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք՝ 'ի ժամ ընդունելի։

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց· որք առ նոսա ինչ ոչ մերձեսցին։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղև զինև։

Ցնծութիւն իմ, փրկեա՛ զիս յայնցանէ, որք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ, և խելամուտ 'ի ճանապարհի, յոր և

*գնացես, և հաստատեցից 'ի վերայ քոյ զաչս իմ ։*

*Մի՛ լինիք որպէս զձի և զջորի, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն. 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին ։*

*Բազում տանջանք են մեղաւորաց, բայց որք յուսան 'ի Տէր, ողորմութիւն Տեառն շուրջ եղիցի զնոքօք ։*

*Ուրա՛խ լերուք. և ցնծացէք արդարք՝ 'ի Տէր պարծեցարո՛ւք ամենեքեան՝ որք ուղիղք էք սըրտիւք ։*

*Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։*

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո ։

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութեան քոյ ։

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝ յերեսաց մեղաց իմոց ։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս զբեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ · յերեսաց անզգամութեան իմոյ ։

Տառապեցայ՝ և խոնարհ եղէ մինչև յոյժ · զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև

չարչարանօք. եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր՝ առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, եւ հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց՝ եւ այս ոչ եղեւ ընդ իս։

Բարեկամք իմ, եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան, եւ կային. եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ. այք խորհէին չար ՚ի վերայ իմ. խորհեցան զանօրէնութիւն եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ, և որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս զմարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք ՚ի բերան նորա։

Ես ՚ի քեզ Տէր յուսացայ, և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ՚ի սասանիլ ոտից իմոց ՚ի վերայ իմ մեծամեծս խորհեցան։

Ես ՚ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կենդա-

նի են, և զօրացեալ եղեն քան զիս, և բազումք են, որք ատեն զիս 'ի տարապարտուց ։

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ․ չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան ։

Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ, և մի՛ 'ի բացէ առնիր յինէն․ հայեա՛ց յօգնել ինձ՝ Տէր փրկութեան իմոյ ։

Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։

ՈՂՈՐՄԵԱ՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում․ ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ ։

Առաւել լուա՛ զիս յանօրէ-

նութենէ իմմէ. և 'ի մեղաց ի-
մոց սուրբ արա զիս ։

Զանօրէնութիւնս իմ ես ին-
ձէն գիտեմ. և մեղք իմ առա-
ջի իմ են յամենայն ժամ ։

Քեզ միայն մեղայ Տէր, և չար
առաջի քո արարի ։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս
քո. և յաղթեսցես 'ի դատել
քում ։

Անօրէնութեամբ յղացայ, և
'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ։

Դու Տէր՝ զճշմարտութիւն սի-
րեցեր. զանյայտս և զծածկեալս
իմաստութեամբ քով յայտնեցեր
ինձ ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ, և սուրբ
եղէց. լուա՛, և քան զձիւն սպի-
տակ եղէց ։

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն և

զուրախութիւն. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ՝ հաստատեա՛ յիս Աստուած, և զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին.

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած՝ Աստուած փրկութեան իմոյ. ցըն-

ծասցէ լեզու իմ յարդարութեան քում ։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո ։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք · բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար ։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ , զսիրտ սուրբ՝ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ ։

Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի · և շինեսցին պարիսպք Երուսաղէմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան · ուխտիւք պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս ։

Փառք Հօր , և Որդւոյ և Հոգ-

ւոյն սրբոյ · այժմ և միշտ և յա-ւիտեանս յաւիտենից · Ամէն ։

Տէ՛ր՝ լո՛ւր աղօթից իմոց , և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ · մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն ։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո՝ յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ ,

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ , և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան ։

Հարայ ես որպէս խոտ , և ցամաքեցաւ սիրտ իմ · մոռացայ ուտել զհաց իմ՝ 'ի ձայնէ հեծութեան իմոյ ։

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ՝ նմանեցայ ես հաւալուսան անապատի ։

Եղէ ես որպէս բու աւերակի․ աքնեցայ՝ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի․ և զըմպելի իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո․ զի դու բարձրացուցեր, և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո յազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ՚ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամենայն թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։

Շինէ Տէր զՍիոն, և երևեսցի փառօք իւրովք ՚ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։

Գրեսցի այս յազգ յայլ. ժողովուրդ որ ստացեալ է՝ օրհնեսցէ զՏէր։

Հայեցաւ նա ՚ի բարձանց՝ ՚ի սրբութենէ իւրմէ. Տէր յերկնից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց և արձակել զորդիս մահապարտաց,

Պատմել ՚ի Սիոն զանուն

Տեառն, և զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ։

Ժողովել ժողովրդոց ՚ի միասին. և թագաւորաց ծառայել Տեառն։

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի զօրութեան իւրոյ, ըզնուազութիւն աւուրց իմոց ասա՛ ինձ, և մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց. զի յազգէ յազգ են ամք քո։

՚Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս՝ և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին. և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա, և փոխեսցին։

Բայց դու նոյն ես, և ամք քո

ոչ անցանեն · որդիք ծառայից քոց բնակեսցեն 'ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի ։

Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

'Ի ԽՈՐՈՑ կարդացի առ քեզ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում ։

Եղիցին ականջք քո · 'ի լսել զձայն աղօթից իմոց ։

Եթէ զանօրէնութիւնս քննես Տէր՝ Տէր՝ ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն ։

Վասն անուան քոյ համբերի Տէր · համբերէ անձն իմ բանի քում · յուսացաւ անձն իմ 'ի Տէր ։

'Ի պահէ առաւօտու մինչև

յերեկոյ · ՚ի պահէ առաւօտու յուսացաւ իսրայէլ ՚ի Տէր ։

՚Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, եւ ՚ի նմանէ է փրկութիւն · եւ նա փրկեսցէ զիսրայէլ յամենայն նեղութեանց նորա ։

Փառք Հօր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն սրբոյ · այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

Տէր լո՛ւր աղօթից իմոց · ունկնդիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով ։

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում · զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի ։

Հալածեաց թշնամին զանձն իմ · խոնարհ արար յերկիր ըզկեանս իմ, եւ նստոյց զիս ՚ի խա-

ւարի որպէս մեռեալ յաւիտե-
նից ։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս ։

Յիշեցի զաւուրս զառաջինս · խորհեցայ յամենայն գործս քո · յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ · վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր · զի նուաղեցաւ յինէն հոգի իմ ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն · նմանեցիմ այնոցիկ, ոյք իջանեն 'ի գուբ ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո · զի ես 'ի քեզ Տէր յուսացայ ։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր

գնացից · զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց Աստուած · զի զքեզ ապաւէն ինձ արարի ։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո · զի դու ես Աստուած իմ ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ ։

Վասն անուան քոյ Տէր՝ կեցուսցես զիս · արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ · և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ · զի ես ծառայ քո եմ ։

Փառք Հօր , և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

# ՀԱՌԱՉԱՆՔ

## ՆԱԽ ՔԱՆ ԶՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Եւ արդ զինչ գոյ առնել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համբառնալ և հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի, ըստ մարգարէութեանն խրատու, ահա 'ի բարբառոյն կարկառեալ 'ի յոյս։ Իսկ եթէ զփականս շարժողութեան շրթանցս բացից, բանադատեցից խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութեան յալեաց բազմութեան խէթ մտացս յառաջադրէ։

Եւ արդ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին զոչումն երկրորդեցից և ես ընդ Նմին · մեղայ Տէր մեղայ , և անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ ։ Հիւսեալ ընդ Նմին զբանս յիսներորդի Սաղմոսին , անթիւս զրեմ զպարտուցս սակ անձինս մեղաց՝ քան զհիւղ երկրի հողմահաս փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ ։

Մեղայ յերկինս և առաջի քո , ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ · զողորմելին ձայն աղերսանաց արտօսրածին ողբովք գոչման 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ , Հայր գթու-

թեանց, Աստուած բոլորից. չեմ արժանի կոչիլ և ոչ ընաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապարան վարձկան։ Ընկա՛լ զսովեալս տարագրական պարտական մնասուց. և զցաւ քաղցոյս լլկանաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Լե՛ր ընդ առաջ քո ողորմութեամբդ ՚ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո՛, գթա՛ծ և անոխակալ, անօրինեալս մեղապարտի զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռամբս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան ամենառատ կամօք մատուսցես. զգարշապարացս թըշուառութիւն մերկութեան ոտիցըս պատսպարութեամբ Աւետա-

բանական ամբաւերարկու օգնիցս կօշկաց 'ի յօձիս թիւնից միշտ ամբացուցես ։ Զգուշարակդ պարարակի եղինդ երկնայնոյ , որ է միածին Որդին քո օրհնեալ խոկապէս մարդ առնլութեամբ , կարօտելոյս բարեաց նուիրեա՛ · որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ 'ի լրութեան , յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ , բոլոր յամենեսին և ընաւ յամենայնում , էութեամբ յերկինս և խոկութեամբ 'ի սորբնս , աննըուագ մարդկութեամբ և անթերի Աստուածութեամբ · փըշրեալ և բաշխի 'ի մասունս անհատս , զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ · քեզ փառք ընդ նմին ,

*Հայր ողորմութեան յաւիտեա-նից. Ամէն:*

## ԳՈՀՈՒԹԻՒՆ
### ’Ի ԺԱՄՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԶԲԵՐԱՆ *իմ բացի և առի զհոգի, ’ի պատուիրանս քո փափա-քեաց անձն իմ:*

## ԱՂԵՐՍԱՆՔ
### ՅԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԵՒ *արդ քանզի առ բարձ-րեալն Աստուած յօղաւորական*

շրթամբք կարդաս , որ գործովք միայն գրաւի , և ո՛չ ստեղծաբանութեամբ կաշառի , որ յԵգիպտոս միշտ ունիս զորտեդ զդարձն , զի՞նչ օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական աստանօր եղից՝ ա՛նձն իմ պարտաւոր , պատժակից կործանեցելոյն Սոդոմայ , ըմբերանեալ դատախազըս Նինուէի , անարի բարբարոսս քան զտիկինն Հարաւային , վատթարագոյնս քան զՔանան , յամառեցեալս քան զԱմաղէկ , անբժշկականս քաղաք դրօշելոց , նշմար ծնեցեալ ապստամբութեան հինն Իսրայէլի , յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն Յուդայ , կշտամբեալս գեր քան զՏուր , տարամերժեալս քան ըզԾայդան , խորթաբարոյս քան

զԳալիլեա , աններելիս քան զան-
հաւանն Կափառնաում , պարսա-
ւեցեալս իբր զՔորազին , բամբա-
սեցեալս ընդ Բեթսայիդայ , ան-
պարկեշտ ծաղկեցեալ ալեօքս Եփ-
րեմի , աղու աղաւնիս միշտ յի-
մարութեամբ՝ այլ ոչ հանդար-
տութեամբ , 'ի կորեանց առիւ-
ծուց անձնական օձս եղեռնային,
կերպս ձուոց քարբից լցեալ ժան-
տութեամբ , պատկերս վերջին
հարուածոցն Երուսաղեմի , ըստ
բանին Տէրունի՝ և տեսանողացն
ձայնի , տաղաւարս մերժեալ՝ հա-
սեալ 'ի կործանումն , խորտա-
կեալ դրացս վատահարան , և կըր-
կին ծրդեալ շինուածս խօսուն,
թողեալ ժառանգութիւնս յար-
մարական , մոռացեալ տունս
Աստուածակերտ , ըստ բանից Նա-

խաղրեցելոցն՝ Մովսէսի, Դաւ-
թայ և Երեմիայի ։ Յարկս բա-
նական՝ ունօղս բոլորաութեան,
հարուածեալ խրատու քերմանն,
օրէնիւ կազզուրեալ, օծեալ
կաւուքն՝ ողոքական հեզութեամ-
բըն, անճարակ գոեալ յեկս հնա-
րից, փակեալ վերայէն ձեռ-
ամբ շինողին, որպաւքս ընկեցեալ
իրաւացի հատուցմամբ հրամա-
նաւ հզօրին 'ի տեղի անտուրը,
հերքեալ տարագրեալ խորցաւ-
մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայ-
ելոյ, ծածկեալ դրամն յերկրի
չարեօք, ըստ աւանդակորոյս
ժխտողին՝ որ յԱւետարանին ցու-
ցանի ։

Այլ դու Աստուած, Աստուա-
ծըդ հոգւոց և ամենայն մարմնոց՝
ըստ դաւանելոյ աստուածաշնոր-

հին , երկայնամիտ և բազումողորմ՝ ըստ որոյն Յովնանու ձայնին , շնորհեա՛ կատարել՚ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութեան ։ Եւ ընդ լալոյ սերմանել բանիս , ՚ի նախընթաց չուս աստիճանաց օթևանացս պատրաստութեան , ՚ի կատարածն ժամանելոյ հատուածման հնձոյն , դարձոյց բերկրեցեալ լրութեամբ քաւութեան՝ պտղոյն երանութեան որայիցն բարութեան ։ Մ՚ի տացես ինձ արգանդ սրտի անորդի իբր Իսրայէլի , և ստինս աչաց ցամաքեալս՝ ով ամենագութ ։ Լո՛ւր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած , նախ քան երկնի , և երկին երկրի , և նա ցորենոյ և

գինւոյ և ձիթոյ, և նոքա խորայ-
ելի։ Եւ երկնաւորացն աղերս
առ քեզ՝ հոգւոյս ազդեսցէ, քան
թէ տարերաց ապականացուաց։
Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բա՛ց
տարակուսելոյս՝ 'ի մտաւոր մաղ-
թանաց այսր հեծութեան՝ կամս
քաղցրութեան՝ զօրանալ աստէն.
զի մի՛ 'ի բանալ վերնայինն երկ-
նի՝ անընտիր գտեալ կրթու-
թեան վայելման լուսոյ՝ իբր ըզ-
նիւթ մոմոյ սպառեցայց ջնջեալ
'ի միջոյ։ Ոգե՛ զրկելոյս, ըստ
մաղթանաց գոչման աստղին.
և ո՛յժ թալկացելոյս, և կեանք
մաշելոյս մտացս խղճիւ, այլ
ո՛չ սաժանմամբ կրից՝ աշխատու-
թեամբ զքեզ խնդրելոյ, ա՛ռ զա-
ւանդ մաղթանացս, և տո՛ւր
զողորմութիւն քո շնորհացդ.

ընկա՛լ զփոքրս 'ի տկարէս , և շնորհեա՛ զմեծդ առ 'ի հզօրէդ · զօրացո՛ զբանս զղջման , առաքեալ 'ի մեզ հոգիդ 'ի բարձանց՝ Աստուածաշունչ պատգամօքս 'ի սմա եդելոցս ։ Պարգևեա՛ բարեբար՝ զառակն Եսայեայ , լուսաւորել առ ճշմարտութիւնն , մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս դոյլ՝ անարգս ձայնի՝ զոսկի քո շնորհի , ընդ անդարդութեան երկաթոյս սևութեան զունոյս՝ պղինձ պճնենելի , ցոյցք առաքինութեան , հրաշեկ Լիբանանու ։ Ընդ քա՛ր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝ չերկնչել 'ի քէն , անճառ և ահաւոր ։ Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաջան սերմանօղ աներերի երկրի ։ Մի՛

լիցի ինձ երկնել և ոչ ծնանել, ողբալ և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել, ամպել և ոչ անձրևել, ընթանալ և ոչ հասանել, ինձ ձայնել և քեզ ոչ լսել, պաղատել և անտես մնալ, կողկողել և ոչ ողորմել, աղաչել և ոչ ինչ օգտել, գոհել և ոչ ճենճերել, զքեզ տեսանել և դատարկ ելանել։ Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ միայնդ Հզօր. մի՛ զանվճար տանջանացն տայժմ՝ ընդ թուոյլ աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ հատուցաներ։ Կեցո՛ զիս զթած, լո՛ւր ինձ ողորմած, մարդասիրե՛ Ներող, խընայե՛ երկայնամիտ, պաշտպանե՛ ապաւէն, բարերարե՛ Հզօր, ազատե՛ ամենակալ, կենատոր-

ծեմ նորոգօղ , վերականգնեմ ահաւոր , լուսաւորեմ երկնային, բժշկեմ հնարաւոր , քաւեմ անքնին , պարգեւատրեմ առատ , շնորհազարդեմ աննախանձ, հաշտեմ անախտակիր , ընկա՛լ անոխակալ , սրբեմ 'ի պարտուց օրհնեալ ։ Եթէ յառեցից զաչս իմ, նայեցեալ 'ի հայեցուած երկուց վտանգից յաւուր թշուառութեան , զքոյդ տեսից փրկութիւն՝ յոյս եւ խնամակալ · եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր յամենազրաւ ուղին առակալի · հրեշտակ քո խաղաղութեան քաղցրութեամբ ինձ պատահեսցէ ։ Ցո՛յց ինձ Տէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի լուսոյ ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգե-

ւօք սիրոյ քոյ եկեալ հասեալ ։ 'Ի յարդարոյն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանեցուսցես · զանակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատութեանն աւուր շնորհեսցես ։ Քա՛ւ լիցի քեզ, բարերանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ զազան դժնդակ տացես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անա՛խտ կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկութիւն ։

Արդեօք մոռասցիս զբարերարելդ՝ ակնկալութիւն · անտեսեսցես զգթասիրելդ՝ խնամօղ · այլայլեսցես զմարդասիրելդ՝ անփոփոխ · նհանջեսցես զկենագործելդ՝ անվախճան · թողուցուս զողորմութիւնդ՝ երջանիկ պըտուղ ։ Աղաւաղեսցես զքաղց-

րութեանդ բարեշնորհ ծաղկիդ · անպատուեսցես զնիւթ պանծանաց քումդ ճոխութեան · յեղանակեսցես զփառս հերաց քումըդ բարձրութեան · ոչ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պսակի ։

Եթէ ողորմածացն է երանութիւն , իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ , ոչ զողորմն պարգևեսցես փըրկութիւն · ոչ մատուցանիցես դեղ վիրացս , ոչ սպեղանիս խոցուածոյս , ոչ դարման տկարութեանս · ոչ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգևդ տիեզերաց , որ միայնդ ունիս փառըս ինքնութեամբ , իսկութեամբ և յարակայ մշտնջենաւորու-

թեամբ , վկայեալ 'ի բնաւից , օրհնեալ և փառաւորեալ յերկս յաւիտեանս , և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից · Ամէն ։

# ՀԱՆԳԱՆԱԿ

## ՆԻԿԻԱԿԱՆ

ՀԱՒԱՏԱՄՔ 'ի մի Աստուած Հայրն ամենակալ · յարարիչն երկնի և երկրի · երևելեաց և աներևութից ։

Եւ 'ի մի Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝ Որդին Աստուծոյ · ծնեալ յԱստուծոյ Հօրէ միածին · այսինքն յէութենէ Հօր · Աստուած յԱստուծոյ · լոյս 'ի լուսոյ ·

Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ · ծնունդ և ոչ արարած, նոյն ինքն 'ի բնութենէ Հօր · որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի · երևելիք և աներևոյթք ։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով ։ Որով էառ զմարմին զհոգի և զմիտ · և զամենայն որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք ։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ · ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդա-

նիս և զմեռեալս · որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան ։

Հաւատամք և 'ի սուրբ Հոգին · յանեղն և 'ի կատարեալն · որ խօսեցաւ յօրէնս և 'ի Մարգարէս և յԱւետարանս · որ էջն 'ի Յորդանան · քարոզեաց զԱռաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն ։

Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յԱռաքելական Եկեղեցի, 'ի մի մկրտութիւն · յապաշխարութիւն · 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց · 'ի յարութիւն մեռելոց · 'ի դատաստանն յաւիտենից · հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս ։

ԻՍԿ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի · կամ էր երբեմն

յորժամ ոչ էր սուրբ Հոգի․ կամ թէ՝ յոչ էից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և Առաքելական սուրբ Եկեղեցի ։

## Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ասացեալ։

ԻՍԿ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս․ երկրպագանելով սրբոյ Երրորդութեան, և միոյ Աստուածութեանն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## ՀՐԵՇՏԱԿԱՑ

ՓԱՌՔ ՚ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն՝ ՚ի մարդիկ հաճութիւն, և օրհնութիւն քեզ ՚ի բարձունս․ օրհնեալ ես Տէր Աստուած մեր․ օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ ։ խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ․ փառաւորեմք զքեզ․ գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց ։ Տէր թագաւոր սուրբ երկնային․ Աստուած և Հայր ամենակալ․ Տէր և Որդի Հօր միածին ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ և սուրբ Որդի․ Տէր Աստուած գառն Աստուծոյ և

Որդի Հօր · որ առեր զմեղս 'ի կուսէն ։ Ողորմեցար բարձեր զմեղս աշխարհի , և արդ ընկա՛լ զաղաչանս մեր · սուրբդ որ նստիս ընդաջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ · զի դու միայն սուրբ՝ դու միայն բարձրեալ ես՝ դու միայն Տէր մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ։ Տէր և Հոգիդ սուրբ որ 'ի փառս Աստուած ընդ Հօր · Ամէն ։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ · Տէր և գովեմք զանուն սուրբ . քո՝ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։ Արժանի արա՛ Տէր զօրս զայս խաղաղութեամբ , և առանց մեղաց պահեա՛ զմեզ ։ Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց · գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն · Օրհնեալ Տէր

ուսո՛ ինձ զարդարութիւնս քո ·
Օրհնեալ Տէր ուսո՛ ինձ զարդա-
րութիւնս քո · Օրհնեալ Տէր
ուսո՛ ինձ զարդարութիւնս քո ·
Տէր ապաւէն եղեր մեր յազգէ
յազգ · ես ասացի՛ Տէր ողորմեա՛
ինձ և բժշկեա՛ զանձն իմ ես
մեղայ քեզ · ցո՛յց մեզ Տէր զողոր-
մութիւնս քո · և զփրկութիւնս
քո տուր մեզ · Տէր ողորմութիւն
քո յաւիտեան · զգործս ձեռաց
քոց մի՛ անտես առներ · Տէր իմ
զքեզ ապաւէն ինձ արարի · ուսո՛
ինձ առնել զկամս քո՝ զի դու ես
Աստուած իմ · 'ի քէն է Տէր աղ-
բիւր կենդանութեան , և լու-
սով երեսաց քոց տեսանեմք ըղ-
լոյս : Տարածեա՛ զողորմութիւնս քո՝
որք ճանաչեն զքեզ Տէր :

# ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՒԱՏՈՅ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄՔ և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ անծին և անսկիզբն · այլ և ծնօղ Որդւոյ և բղխօղ Հոգւոյն սրբոյ ։

Հաւատամք զԲանն Աստուած՝ անեղ ծնեալ՝ և սկսեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս · ոչ յետոյ և ոչ կրտսեր · այլ որ քան Հայրն Հայր՝ ընդ Նմին և Որդին Որդի ։

Հաւատամք զսուրբ Հոգին՝ անեղ՝ անժամանակ · ոչ ծնեալ՝ այլ բղխեալ 'ի Հօրէ · էակից Հօր և փառակից Որդւոյ ։

Հաւատամք զՍրբութիւնն սուրբ՝ մի բնութիւն մի Աստուածութիւն․ ոչ երեք Աստուածք, այլ՝ մի Աստուած․ մի կամք․ մի թագաւորութիւն․ մի իշխանութիւն․ արարիչ երեւելեաց եւ աներեւութից։

Հաւատամք յեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց հաղորդութեամբ սրբոց։

Հաւատամք զՄինն յերից անձանց զբանն Աստուած՝ ծնեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս․ ՚ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ՝ առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն․ ինն ամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին, եւ եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ

կատարեալ · հոգւով և մտօք և մարմնով · մի անձն մի դէմ և միաւորեալ մի բնութիւն ։ Աստուածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան · անսերմն յղութիւն և անապականն ծնունդ · որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա՝ և ոչ վախճան մարդկութեան նորա · (զի ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ էրէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան ։)

Հաւատամք զՏէրն մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ շրջեալ 'ի վերայ երկրի · յետ երեսուն ամաց եկեալ 'ի մկրտութիւն · Հայր 'ի վերուստ վկայեալ՝ դա՛ է Որդի իմ սիրելի , և Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ 'ի վերայ նորա · փորձեալ 'ի սատանայէ և յաղթեալ նմա · քարոզեալ մարդկան զփրկու-

թիւն. աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ, և ծարաւեալ. յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնով, և կենդանի մնացեալ Աստուածութեամբն. մարմինն եդեալ 'ի գերեզմանի՝ միաւորեալ Աստուածութեամբն, և հոգւովն իջեալ 'ի դժոխս՝ անբաժանելի Աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս՝ և ազատեալ զհոգիսն. յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց և երեւեալ աշակերտացն.

Հաւատամք զՏէրն մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր. այլ և գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի

*դատել զկենդանիս, և զմեռեալըս որ և յարութիւն ամենայն մարդկան ։*

*Հաւատամք և զհատուցումն գործոց · արդարոցն կեանք յաւիտենական · և մեղաւորացն տանջանք յաւիտենական ։*

---

# ԱՂՕԹՔ

## ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱՌԱՔԵԱ՛ Տէր *զլոյս քո և զճշմարտութիւն քո · զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո ։*

*Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած · որ ուրախ առնէ զմանկութիւն իմ ։*

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ ։

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ · կամ ընդէ՞ր խռովես զիս · յուսա՛ առ Աստուած · խոստովանեմ Նմա · փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։

Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք · ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛ ։

Օրհնութիւն և փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

ԵԿԵՍՑԷ 'ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր · և փրկութիւն քո ըստ բանի քում ։

Տաց պատասխանի ոյք Նախա-

տեն զիս բանիւք՝ զի ես 'ի բանս քո յուսացայ ։

Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ՝ զի յիրաւունս քո յուսացայ ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ · յաւիտեան և յաւիտեանըս յաւիտենից ։

Գնայի ես յանդորրու՝ զի ըզպատուիրանս քո խնդրեցի ։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչէի ։

Խորհէի 'ի պատուիրանս քո , զոր սիրեցի ։

Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի · և խորհէի յարդարութեան քում ։

Յիշեա՛ զբան ծառայի քո՝ յոր և յուսացուցեր զիս ։

Սա՛ մխիթարեսցէ զիս 'ի խոնարհութեան իմում․ զի բան քո կեցոյց զիս ։

Ամբարտաւանք անիրաւեցան յոյժ․ այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր՝ և մխիթարեցայ ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո ։

Գովելի էին ինձ իրաւունք քո 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր․ և պահեցի զօրէնս քո ։

Սա՛ եղև ինձ ճանապարհ 'ի կեանս․ զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Զանօրէնսն ատեցի և զօրէնս քո սիրեցի ։

Օգնական և փրկիչ իմ ես դու․ և ես 'ի բանս քո յուսացայ։

'Ի բաց եղերուք յինէն չարք․ և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում և կեցո՛ զիս․ և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ և ապրեցո զիս․ և խորհեցայց զիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան, որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց․ զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Անցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի․ վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեմ ընդ երկիւղ քո ըզ-մարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ ։

Արձակեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր՝ ըստ բանի քում իմաստուն արա զիս ։

Առցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ քով փրկեա զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ գոհութիւնս քո՝ յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են ։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Ցանկացայ փրկութեան քում Տէր՝ և օրէնք քո խօսք իմ էին ։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզ-քեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո՝ զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ իմ ոտք ամբարտաւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողդոջուսցեն զիս։

Անդ անկցին ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն. մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ։

Ես ՚ի Տէր յուսացայ. ցնծացայց և ուրախ եղէց յԱստուած փրկիչ իմ։

Տէր Տէր ես ինձ զօրութիւն. և կացոյց զոտս իմ ՚ի հաստատութեան. ՚ի վերայ պարանոցի

*Թշնամւոյն կացոյց զիս . և հան-գոյց զիս երագ երագ ։*

*Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն , ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ ,*

*Ասասցէ Տեառն ընդունօղ իմ ես դու . ապաւէն իմ Աստուած և ես յուսամ 'ի նա ,*

*Նա՛ փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին . և 'ի բանիցն 'ի խռովութենէ ։*

*'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ և 'ի հովանի թևոց նորա յուսասցիս ։*

*Որպէս զզէն շուրջ եղիցի զքև Ճշմարտութիւն նորա ։*

*Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի . և ո՛չ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ ։*

*Ցիրէ որ շրջի 'ի խաւարի . 'ի*

գայթակղութենէ դիւէն 'ի հասարակ աւուր ։

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք ․ և բիւրք ընդ աջմէ քումմէ ․ և առ քեզ ինչ ոչ մերձեսցին ։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու ․ և զհատուցումն մեղաւորաց տեսցես , զի դու Տէր յոյս իմ ես ։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն ․ ոչ հասցեն առ քեզ չարք ․ և տանջանք մի մերձեսցին 'ի յարկս քո ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո ։

'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ , զի մի երբէք հարցես զքարի զոտն քո ։

'Ի վերայ իժից՝ և քարբից գնասցես դու և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն ։

Քանզի յիս յուսացաւ փրկեցից զնա․ հովանի եղէց նմա՝ զի ծանեաւ զանուն իմ ։

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա․ և առ նմա եղէց 'ի նեղութեան ։

Փրկեցից և փառաւոր արարից զնա․ երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ ։

Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ որ բնակեալդ ես 'ի յերկինս ։

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն Տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ ։

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր՝ մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր ։

Ողորմեա՛ մեզ Տէր՝ ողորմեա՛ մեզ · զի բազում լցաք արհամարհանօք ։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք որք նախատէին զմեզ · և արհամարհանօք ամբարտաւանից ։

Աստուած՝ յանուան քում՝ կեցո՛ զիս · և 'ի զօրութեան քում իրա՛ւ արա ինձ ։

Աստուած՝ լո՛ւր աղօթից իմոց , ունկնդիր բանից բերանոյ իմոյ ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ · և հզօրք խնդրեցին զանձն իմ , և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց ։

Ահա՛ Աստուած օգնական իմ , և Տէր ընդունօղ հոգւոյ իմոյ ։

'Ի դարձուցանել զչարն 'ի թշն-

նամեան իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում Տէր՝ զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո · գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեալ ես որ նայիս 'ի քրովբէս և հայիս յանդունդս · գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից · գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեցէք զԱստուած 'ի սրբութեան նորա · օրհնեցէք զնա 'ի հաստատութեան զօրութեան նորա ։

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա · օրհնեցէք զնա 'ի բազում մեծութեան նորա ։

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհ-

նութեան · օրհնեցէք զնա սաղ-
մոսիւք և օրհնութեամբ ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ · գովեցէք զնա ուրախութեամբ ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղ-ցըր · գովեցէք զնա 'ի բարբառ-ելիս ։

Օրհնեցէք զնա 'ի ձայն գո-հութեան · ամենայն հոգիք օրհ-նեցէք զՏէր ։

Արդ արձակեմ զծառայս քո Տէր՝ ըստ բանի քում 'ի խա-ղաղութիւն · զի տեսին աչք իմ զփրկութիւն քո , զոր պատ-րաստեցեր առաջի ամենայն ժո-ղովրդեան ։

Լոյս 'ի յայտնութիւն հեթա-նոսաց · և փառք ժողովրդեան քում Իսրայէլի ։

Զգեցեր զձեռն քո՝ և փըր-

կեցոյց զիս աջ քո․ եւ Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան․ զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Տէր՝ հա՛ն 'ի բանտէ զանձն իմ․ գոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարքն մինչեւ հատուսցես։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր․ եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ․ այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն․ եւ սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց․ եւ

արար զօրութիւն բազկաւ իւրով ։

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից · և քակեաց զհըզօրս յաթոռոց ։

Զխոնարհս բարձրացոյց · զկարօտս ելից բարութեամբ · և ըզմեծատունս արձակեաց ունայնս ։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշելով զողորմութիւն իւր ։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ,

Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ · կեցո՛ զորդի աղախնոյ քոյ · և արա՛ առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր , և Որդւոյ և Հոգ-

ւոյն որդոյ · այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից · Ամէն ։

# ՄԱՂԹԱՆՔ

ԱՆՁՆ իմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ · և 'ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ Թագաւոր երկնաւոր · զբազմութիւն որդոց քոց բարեխօս ունիմ առ քեզ , որ երկայնամիտդ ես առ ամենեսեան՝ մի անտես առներ զապաւինեալս 'ի քեզ · այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քով 'ի խաղաղութեան ։

# ՔԱՐՈԶ

ԱՂԱՉԵՍՑՈՒՔ զամենակալն Աստուած · և խնդրեսցուք

'ի Նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս. 'ի դիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք ։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց 'ի Տեառնէ խնդրեսցուք ։

Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց 'ի Տեառնէ խնդրեսցուք ։

Զսուրբ խաչին մեծ և կարող զօրութիւն՝ յօգնութիւն անձանց

մերոյ 'ի Տեառնէ խնդրեսցուք ։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք ։

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք ։

Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում · ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

## ԱՂՕԹՔ

ՏԷՐ Աստուած մեր՝ դու պահեա՛ զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի · ընդ սուրբ երկիւղ քո բնակեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր · որպէս զի

յաւիտենայն ժամ քեւ պաշտպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն. և քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

ՀՐԵՇՏԱԿԻ խաղաղութեան յանձն արա զանձինս մեր Տէր զօրութեանց. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի. յարթնութեան և 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի. և այժմ աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր՝ զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել. և հա-

ցանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

# ՍԱՂՄՈՍ

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք · զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ ։

'Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան · 'ի նեղութենէ ինձ անդորր արարեր · ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց ։

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք · ընդէ՞ր սիրէք

զնանրութիւն և խնդրէք ըզ-
ստութիւն ։

Ծաներուք զի սքանչելիս ա-
րար Տէր սրբոյ իւրում . և Տէր
լուիցէ ինձ 'ի կարդալ իմում
առ նա ։

Բարկանայք և մի մեղանչէք .
զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր ,
յանկողինս ձեր զղջացարուք ։

Մատուցէք պատարագս ար-
դարութեան և յուսացարուք 'ի
Տէր ։

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ
մեզ զբարութիւն Տեառն . նշա-
նեցաւ առ մեզ լոյս երեսաց
քոց . և ետուր ուրախութիւն
սրտից մերոց ։

'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձի-
թոյ իւրեանց լցուցեր զնոսա ։

Խաղաղութեամբ յոյս և 'ի

սոյն ննջեսցուք և զարթիցուք ·
զի դու Տէր միայն առանձին
յուսով քով բնակեցուցեր զմեզ ։

Ալէլուիա Օրթի ·

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Եւ ընդ հոգւոյդ քում ·

Երկիւղածութեամբ լուարուք ։

ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ ։

Փառք քեզ Տէր Աստուած մեր ·

Պռօսխումէ ·

Ասէ Աստուած ։

Տէրն մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ասէ ։

Ամէն ամէն ասեմ ձեզ · եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն

կայ ։ Ապա եթէ մեռանիցի , բազում արդիւնս առնէ ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա ․ և որ ատէ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ , 'ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա ։ Եթէ ոք զիս պաշտեսցէ , զկնի իմ եկեսցէ , և ուր եսն եմ , անդ և պաշտօնեայն իմ եղիցի ։ Եթէ ոք զիս պաշտիցէ ․ պատուեսցէ զնա Հայր իմ ։

Փառք քեզ Տէր Աստուած մեր ։

## ՔԱՐՈԶ

ՍՈՒՐԲ Խաչիւս աղաչեսցուք զՏէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց ․ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ ամե-

նակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա ։

# ԱՂՕԹՔ

ՊԱՀՊԱՆԵԱ՛ զմեզ ՔՐԻՍՏՈՍ Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութեան․ փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն ։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն ։

## ՕՐՀՆԵԱԼ ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ․ ԱՄԷ՛Ն ։

ՀԱ՛ՅՐ մեր որ յերկինս․ սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ Արքայութիւն քո․ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն․ այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ ։ Զի քո՛ է Արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս․ Ամէն ։

# ՄԱՂԹԱՆՔ

ԱՆԿԱՆԻՄՔ առաջի քո սուրբ Աստուածածին և աղաչեմք զանարատ կոյսդ՝ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց․ և աղաչեա՛ զմիածին որդիդ՝ փրկել զմեզ ՚ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց ։ Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն․ այսօր հայցմամբ ծնրուն-

ւոյն՝ արձակեմ և զիս զբազմամեղս 'ի կապանաց մահու 'ի կեանսն յաւիտենից ։

# ՄԱՂԹԱՆՔ

## ԸՆԴ ԴԷՄ ԱՐՀԱՒԻՐԱՑ ԳԵՂԵՐԱՑՆՈՑ

ԸՆԿԱ́Լ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս · մատի́ր զթութեամբ առ պատկառեալս դիմօք · փարատեա́, ամենապարգև, զամօթական տխրութիւնս · բա́րձ յինէն ողորմած, զանբերելի ծանրութիւնս · անջրպետեա́ հնարաւոր, զմահացու կրթութիւնս · աւարեա́ միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս · բացադրեա́

վերնային , զմոլեգոյն մառախուղ-
կնքեմ , կեցուցիչ՝ զկորուսչին
ընթացմունս · ցրուեմ ծածկա-
տես , զըմբռնողին չար գամունս ·
խորտակեա , անքնին , զմարտողին
դիմեցմունս ։ Տեառնագրեմ քո
անուամբդ զլուսանցոյց երդ յար-
կիս · պարփակեմ քո ձեռամբդ
զառաստաղ տաճարիս · գծագը-
րեմ քո արեամբդ , զմուտ սենից
սենեկիս · կերպացո զքո նշանդ ,
'ի հետս ելից մաղթողիս · ամրա-
ցո քո աջովդ զհանգստեանս խըշ-
տիս · մաքրեսցես 'ի հաղբից ըզ-
ծածկարան անկողնոյս · պահես-
ցես քո կամօքդ զտառապեալ
անձն հոգւոյս · անխարդախ արա-
ցես զքո շնորհեալ շունչ մարմ-
նոյս · կացուսցես շըջափակ զպար
զօրուդ երկնայնոյ · կարգեսցես 'ի

դէմս, ընդդէմ դիւացն դասու։ Տո́ւր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս ննջման 'ի խռովութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածովք սրբուհոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա́ ըզպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ, 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ

ամէնօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ, յերկինս առաքեալ: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

# ՍԱՂԹԱՆՔ

## ԱՌ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալդ յամենայնի, Հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տըկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ. որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դևք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին

մահացեալք , բժշկին հարուածք , ողջանան վէրք , բառնին ապականութիւնք , տեղի տան տըխրութիւնք , նահանջին հեծութիւնք , փախնու խաւարն , մեկնի մէգն , մերժի մառախուղն , փարատի մռայլն , սպառի աղջամուղջն , վերանայ մութն , գնայ գիշերն , տարագրի տագնապն , չքանան չարիքն , հալածին յուսահատութիւնքն , և թագաւորէ ձեռն քո ամենակալ , քաւիչդ ամենայնի ։

Որ ոչ եկիր կորուսանել ըզմարդկան հոգիս , այլ կեցուցանել . թող ինձ զանթիւ չարիսն իմ բաղում ողորմութեամբդ . զի դու միայն ես յերկնի անճառ , և երկրի անքննին , 'ի տարր գոյից , և յեզը ծագաց աշխարհի ,

սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայնիւ լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեա-նըս. Ամէն:

# ՄԱՂԹԱՆՔ

## 'Ի ԳԻՒԱՑ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղ-ծիչ լուսոյ և յօրինիչ գիշե-րոյ, կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի, յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսե-լոց, որ ամենարուեստ իմաս-տութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն, քանզի ոչ զօրէ ծածկել զխա-

ուրս տէրութեան քո խաւար գի-
շերոյ · որում կրկնի ծունր երկր-
պագութեան ամենայն եղելոց
երկնաւորաց և երկրաւորաց և
սանդարամետականաց , որ լսես
զհեծութիւն կապելոց և հայիս
յաղօթս խոնարհաց և ընդունիս
զխնդրուածս նոցա , Աստուած
իմ և Թագաւոր իմ , կեանք
իմ և ապաւէն իմ , յոյս իմ
և վստահութիւն իմ , ՅԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍ Աստուածդ ամենայնի,
սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս
սրբոց , մխիթարութիւն վշտաց և
քաւարան մեղուցելոց , որ գի-
տես զամենայն յառաջ քան զլի-
նել նոցա , առաքեա՛ զպահպա-
նողական զօրութիւն աջոյ քո և
փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և
'ի դիւէ չարէ ։ Որպէս զի ընդ-

*յիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ. միշտ համբուրեալ շըրթամբք հոգւոյ ըղձութեան շընչոյ ՚ կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ ։*

*Եւ ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր Աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր , և ՚ի նոյն շնորհ որդէգրութեան զմեզ մկրտեցեր , և ՚ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր , այսու պարգևօք Աստուածականօք ամաչեսցէ սատանայ , քակտեսցին մեքենայքն , բարձցին որոգայթքն , պարտեսցին մարտուցեալքն , պակասեսցին զէնքն սայրասուրք , մերժեսցի մէգն , փարատեսցի խաւարն , մեկնեսցի մառախուղն ,*

Բազուկ քո հովանասցի, և աջ քո
կնքեսցէ, վասն զի գթած ես և
ողորմած, և անուն քո կոչեցեալ
է 'ի վերայ ծառայից քոց: Եւ
քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով
փառք և իշխանութիւն յաւի-
տեանս յաւիտենից. Ամէն:

# ԽՆԴՐՈՒԱԾՔ

ՔՐԻՍՏՈՍ Աստուած անուն
ահաւոր, մեծութեան տեսակ,
անքննին բարձրութեան պատկեր,
անսահման զօրութիւն, կերպա-
րան փրկութեան լուսոյ, պաշտ-
պան կենաց, դուռն արքայու-
թեան վերնում հանգստեան,
ճանապարհ հանդարտութեան,
ապաւինութիւն նորոգ և ան-
տըխրական երանութեան, ամե-

նակալ ինքնիշխանութեան բոլոր էականութեան ,՝ օրհնութեան կոչումն աւետեաց ձայն , երկրութեան բարբառ , անմահութեան դեղ , որդի անճառ Աստուծոյ միոյ . որ ինձ անհնարին է , քեզ դիւրին է . որ ինձ անհասն է , քեզ սահմանեալ է . որ ինձ անանցն է , քեզ հպաւոր է . որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է , քումդ երանութեան մերձաւոր է . որ ինձ անկարելին է , քեզ կատարեալ է . որ ինձ անկշռելին է , քումդ անճառութեան չափեալ է . որ ինձ յուսահատութեանն է , քեզ սփոփանաց է . որ ինձ անբժշկականն է , քեզ անվտանգելի է . որ ինձ հեծութեանն է , քեզ խնդութեան է . որ ինձ ծանունք

են , քեզ թեթեւագոյնք են ․ որ ինձ եղծեալն է , քումդ զօրեղութեան գրեցեալ է ․ որ ինձ կորուսեալն է , քեզ ըմբռնեալ է ․ որ ինձ անձառն է , քեզ համարեալ է ․ որ ինձ մռայլն է , քեզ ճառագայթ է ․ որ ինձ անթիւն է , օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է ․ որ ինձ սոսկալին է , քեզ հեշտալի է ․ որ ինձ փախչելին է , քեզ վանելի է ․ որ ինձ անմատոյցն է ․ քեզ դիւրահերքելի է ․ որ ինձ մահաբերն է , քումդ էականութեան զօրութեան ընդ ոչ դոյն համարեալ է ։

Այլ դու , ողորմած Աստուած բոլորից Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ , եւ այսմ զօրես առ ելքն հնար՝ եթէ գթասցիս ․ վասն անուան

փառաց մեծութեան Հօր քոյ օրհ-
նելոյ , վասն կամաց գթութեան
ոգւոյդ քոյ սրբոյ , տես 'ի տա-
ժանաւորս կրէց յանդիմանա-
կան յայտնութիւն , և 'ի խորոց
սրտի ինքնամատոյց դատախա-
զութիւն · Նայեա' 'ի բնութեանս
ամենապատաղ խակութիւն , և
պարգևեա' բժշկութիւն վէրացս
և հնարաւորութիւն կորստեանս,
զերծումն բազմամասնեայ մահուս
և շաւիղ կենաց ապականելոյս ,
նորոգութիւն եղծմանս և մուտք
յուսոյ ամպարշտելոյս · Եթէ
ես զաննմանն ինձ կամս ցու-
ցի , որչափ առաւել դու զընա-
ւորականդ քո զընտանի բարե-
րարութիւնսդ · եթէ 'ի փշոց պը-
տուղ ընծայեցաւ քաղցրութեան,
որչափ ևս առաւել 'ի ծառայդ

կենաց՝ ճաշակ անմահութեան ։ եթէ ես իմոց ատելեաց ողորմութիւն մաղթեցի , դու քոյոյս զիա՛րդ ոչ կրկին մատուցես հզօր , յաննուազ առատութենէդ ։

Արդ՝ ամս 'ի քոյդ մեծութիւն բարձրեալ՝ նայեցեալ 'ի յիմս փոքրկութիւն ․ ընկա՛լ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս , որ զընաւն համայն տեսանես ․ և որպէս զկիմին զթել ոչ զրեցեր , և զաւազոյս փոքու սասանիլ՝ մի համարեսցիս ․ և իբրև զԴաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն , և առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն գործեսցես , երկայնմտութիւն ․ որ տաս ամենեցուն առատապէս

անաչառութեամբ` որպէս յաղ-
թող բարի բազմիմաստ, և ոչ
նախատես զյետնեալ սորուկս
որպէս ողորմած և ամենաստեղծ.
ստացիր վերստին, և մի կորու-
սաներ զբուծեալս արեամբ քո,
գթած. Զի քո է փրկութիւն,
և 'ի քէն է քաւութիւն, և
քեզ վայել է փառք յամենայն
նի յաւիտեանս. Ամէն:

## ԱՂՕԹՔ

ՀԱՒԱՏՈՎ խոստովանիմ և
երկիրպագանեմ քեզ Հայր և
Որդի և սուրբ Հոգի. անեղ և
անմահ բնութիւն. արարիչ հրե-
րեշտակաց և մարդկան և ամե-
նայն եղելոց. և ողորմեա՛ քո ա-
րարածոցս՝ և ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ անբաժանելի լոյս ։ միանձնական սուրբ երրորդութիւն և մի Աստուածութիւն ․ արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի ․ հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան ․ և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս իմ ․ և ողորմեա ։

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդին քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին ․ մեղայ յերկինս և առաջի քո ․ ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք ․ և ողորմեա ։

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան․ խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց․ և համբարձար փառօք առ Հայր․ մեղայ յերկինս և առաջի քո․ յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով․ և ողոր ։

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն՝ և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո․ մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն․ և ողոր ։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով․ մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինն՝ վասն անուանդ քում սրբոյ․ և ողոր։

Տեսող ամենայնի մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով իմով․ ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց և գրեա՛ զանուն իմ ՚ի դպրութեան կենաց․ և ողորմեա՛ քո արա։

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կամայ և ակամայ՝ գիտութեամբ և անգիտութեամբ․ թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի Աստուածութեան քո․ զգայարանօք իմովք՝ և ամենայն անդամօք մարմնոյս․ և ողոր։

Ամենախնամ Տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յարատ. և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ ոչ խօսիլ զստութիւն. և սրտի իմոյ ոչ խորհիլ զչարութիւն. և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց ոչ գնալ՝ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ող․

Հուր կենդանի ՔՐԻՍՏՈՍ՝ ըզհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ և վառեսցէ զլոյս գիտութեան

քո 'ի սրտի իմում . և ողորմեա՛ ։

Իմաստութիւն Հօր ՅԻՍՈՒՍ՝ տո՛ւր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ . 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս . և ողոր ։

Կամեցող բարեաց Տէր կամարար՝ մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ . այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց . և ողոր ։

Արքայ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց . և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս և սիրել զքեզ միայն և առնել զկամս քո . և ողոր ։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմար-

մին իմ․ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց՝ եւ 'ի մարդոց անիրաւաց․ եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ․ եւ ողոր։

Պահապան Ամենայնի ՔՐԻՍՏՈՍ՝ աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ եւ 'ի գիշերի․ 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել եւ 'ի յառնել՝ զի մի երբէք սասանեցայց․ եւ ողոր։

Աստուած իմ, որ բանաս ըզձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով․ քեզ յանձն առնեմ զանձն իմ․ դու հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան․ եւ ողոր։

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս 'ի չար սովորութեանց իմոց

'ի բարի սովորութիւն · և բևեռեմ 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն՝ և զերկիւղ գեհենոյն՝ և զսէր արքայութեանն · զի զղջացայց 'ի մեղաց և գործեցից զարդարութիւն · և ողոր ։

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին · զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս · և ողոր ։

Պարգևիչ ողորմութեան՝ պարգևեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբն գալ առ քեզ · և ողոր ։

Բարերար Տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս · քաղցրութեամբ աւանդել զհոգի

իմ , և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են 'ի ներքոյ երկնից · և ողոր ։

Լոյս Ճշմարիտ ՔՐԻՍՏՈՍ՝ արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն · և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո · և ողոր ։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք Հօր 'ի դատել ըզկենդանիս և զմեռեալս , մի մըտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում · այլ փրկեա՛ զիս յաւիտենական հրոյն , և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնրդ · և ողոր ։

Ամենողորմ Տէր՝ ողորմեա՛ ա-

մենայն հաւատացելոց 'ի քեզ՝ իմոց և օտարաց՝ ծանօթից և անծանօթից՝ կենդանեաց և մեռելոց․ շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեացս թողութիւն՝ որք առ իս յանցանեացն․ և դարձո զնոսա 'ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին․ և ողոր․

Փառաւորեալ Տէր՝ ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո․ և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և Յովհաննու մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտի-

րոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝ Միանձանց․ և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից․ ԱՄԷՆ։

## ՄԱՂԹԱՆՔ

ՎԱՍՆ սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի՝ Տէր ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ։

## ՔԱՐՈԶ

ՍՈՒՐԲ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս՝ զի

*կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուցէ զարարածս իւր · ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։*

# ԱՂՕԹՔ

*Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո · և աղաչանօք Ամենայն սրբոց քոց · և որոց այսօր է յիշատակ ։ Լո՛ւր մեզ Տէր և ողորմեա՛ · ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր ։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։*

Օրհնեա՛լ Տէր մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ. Ամէն.

Հայր մեր որ յերկինս ես:

# ՄԱՂԹԱՆՔ

ԶՀԱՆԳՍՏԵԱՆ աղօթս և զաղաչանս ընկա՛լ մարդասէր Աստուած ՚ի հաճոյս բարերար կամաց քոց. և մեր մեղաց և բազում յանցանացն թողութիւն շնորհեա՛. և քեզ փառք յաւիտեանս. Ամէն:

ՓԱՌՔ քեզ Տէր Աստուած մեր, որ պարգևեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել:

Մարդասէր Աստուած՝ զառաջիկայ գիշերս որ ՚ի վերայ մեր

գալոց է՝ 'ի մեղաց փրկեա՛ · 'ի չարեաց ազատեա՛ · և 'ի գործս բարիս առաջնորդեա՛ ։

Առաւօտու օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա՛ զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ · և պահեա՛ 'ի խաղաղութեան ։

Տէր Աստուած մեր՝ տո՛ւր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի · բա՛րձ զցասումն և զպատուհասն 'ի յարարածոց քոց ։

Ողորմեա՛ց հարց և եղբարց մերոց · կենդանեաց և հանգուցելոց ։

Ողորմեա՛ց զեկեղեցի շինողաց, երախտաւորաց՝ պտղատուից՝ ըսպասաւորաց և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս են հանգուցեալ ։

*Տէր Աստուած՝ գնեմ թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից· զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով 'ի խաղաղութեան ։*

*Տէր Աստուած մեր՝ պահեա՛ զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով 'ի կամըս ողորմութեան քո ։*

*Նշանաւ սուրբ և պատուական խաչի քո՝ հալածեա՛ զերեւելի և զաներևոյթ թշնամին 'ի սահմանաց մերոց և 'ի բնակութենէս մերմէ · փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից · և քեզ փառք յաւիտեանս · Ամէն ։*

# ԱՂՕԹՔ

## ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ

Տէր ամենակալ՝ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և զաւակի նոցա արդարոց · ամենակալ Տէր՝ Թո՛ղ զմեղս իմ ։

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա · ամէն ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո · փակեցեր զխորս · կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով · ամէն ։

Որ ամենայն ինչ՝ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո · ամէն ։

Անբաւ է մեծ վայելչութիւն

փառաց սրբութեան քո · և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւորաց · անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց · ամէն ։

Զի դու Տէր բարձրեալ՝ գթած երկայնամիտ բազումողորմ · և զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան · ամէն ։

Դու Աստուած՝ ոչ եդեր զապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ՝ որք ոչ մեղան քեզ · ամէն ։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս · զի մեղայ աւելի քան զաւազ ծովու · և բազմացան անօրէնութիւնք իմ · ամէն ։

Չեմ արժանի հայիլ և տեսանել զբարձրութիւնս երկնից ՚ի

բազմութենէ անօրէնութեան ի-
մոյ. ամէն.

Կորացեալ եմ ես 'ի բանու-
թենէ կապանաց երկաթեց՝ և ոչ
գոյ ինձ հանգիստ. ամէն.

Բարկացուցի զսրտմտութիւն՝
և զչար առաջի քո արարի. կանգ-
նեցի պատկեր՝ և բազմացուցի
զցասումն անձին իմոյ. ամէն.

Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցա-
նեմ զծունր սրտի իմոյ՝ և հայ-
ցեմ 'ի քաղցրութենէ քումմէ.
ամէն.

Մեղայ Տէր՝ մեղայ. և զանօ-
րէնութիւնս իմ ես ինձէն գի-
տեմ. ամէն.

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն
թող ինձ Տէր՝ թող ինձ և մի կո-
րուսաներ զիս ընդ անօրէնու-
թեան իմոյ. ամէն.

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ՚ի ներքոյ երկրի. ամէն։

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես և յիս ցո՛յց զբարերարութիւնդ քո, որ անարժան եմ. ամէն։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամէն։

Զքեզ Տէր՝ օրհնեն Ամենայն զուարթունք երկնից. և քո են փառք յաւիտեանս. Ամէն։

Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն Տէր՝ թո՛ղ ինձ զմեղս իմ։

Բազում ողորմ Տէր՝ ողորմեա՛ ինձ,

Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս ՚ի մեղաց և կեցո՛։

Աստուած՝ գթա՛ յիս ՚ի մեղուցեալ ծառայս․ և ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս Աստուածածին Մարիամ․ բարեխօսեա՛ առ Տէր վասն մեր։

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէք առ Հայր ՚ի յերկինս վասն մեր մեղաւորացս։

ՔՐԻՍՏՈՍ որդի Աստուծոյ անոխակալ՝ ընկա՛լ զաղաչանս մեր․ զի ՚ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթօղ զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչի քո Տէր՝ պահպանեա՛ զմեզ։

Առաքեա՛ Տէր զհրեշտակ խաղաղութեան քո՝ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և գիշերի ։

Եւ մարդասիրութեամբ քով յիշեա՛ զմեզ Տէր՝ յիշեա՛ զմեզ յորժամ գաս արքայութեամբ քով և ողորմեա՛ մեզ ։

## ՔԱՐՈԶ

ԵԿԵԱԼՔՍ 'ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով զլոյս միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք 'ի սիրտս մեր․ խնդրելով 'ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց ։ Վասն զի նա ինքն է նախախնամօղն Աստուած յաւիտենական․ որ եկն կամաւ Հօր 'ի փրկ-

կել զարարածս · և տաց զինքն լինիլ քաւիչ մեղաւորաց · յայս ապաշխարողաց · շնորհելով զհանգիստ աշխատելոց · ընդունելով զծանրաբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւութեան ։ Արդ եկա՛յք ամենեքեան · խոնարհեալ անձամբք՝ բեկեալ սրտիւք՝ անկցուք և լայցուք առաջի Տեառն արարչին մերոյ · զի անցուցէ 'ի մէնջ ըզգաստումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով · ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա՛ ։

# ԱՂՕԹՔ

Տէր Աստուած փրկութեան մերոյ՝ որ ողորմած ես և գթած ·

երկայնամիտ բազմողորմ և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան․ որ ոչ կամիս զմահ մեղաւորին․ այլ զդառնալ նորա 'ի չարճանապարհէն և զկեալն։ Դու Տէր՝ առատ ողորմութեամբ քով մխիթարեա զծառայս քո, և տուր սոցա տեղի ապաշխարութեան։ Հաշտեա մարդասիրութեամբ քով, և արա զսոսա անդամս եկեղեցւոյ քում սրբոյ։ Որպէս զի առողջացեալք հոգւով՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ մտցեն յեկեղեցի քո սուրբ։ Եւ ընդ ժողովրդեան քում՝ քեզ հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

# ՚ՆԵՐԲՈՂ,

## ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Եթէ արդ ՚ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց Աստուածային բարկութեանց, տագնապեալ հոգւով թախծութեան իսպառ՝ աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին. հրեշտակ ՚ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն ըն իբրև զօդ. մաքուր որպէս ըզլոյս. անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան. գերազանց քան զընակու-

թիւն անկոխելին փրկութեանց · երանաւոր խոստմանն տեղի · Եդեմ շնչական · ծառ կենացն անմահից , բոցեղէն սրոյն պարունակեալ · 'ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ · հանդստեամբ Հոգւոյն հանգերձեալ և մաքրագործեալ · բնակութեամբ Որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ · միածինն Հօր և քեզ անդրանիկ · որդի քո ծննդեամբ · և Տէր արարչութեամբ · ընդ անախտ մաքրութեանդ · և անբիծ բարի · ընդ անարատ սրբութեանդ · և խնամակալ բարեխօս · Ընկա՛լ ըզմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս · և մատո՛ ընծայեա՛ ընդ այլն խառնեալ զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի 'ի քոյդ

պաղատանս զՀիւսեա՛ մեացս ըղ-
մեղուցելոյս դառն հեծութիւն .
ընդ քումդ երջանիկ և խնկա-
ւորեալ հայցուածոց՝ տուընկդ
կենաց պտղոյն օրհնութեան . զի
՚ի քէն միշտ օգնեալ բարեգոր-
ծեալ . և ՚ի մաքրական քո ծնե-
լութիւնդ ապաւինեալ և լու-
սաւորեալ , կեցից ՔՐԻՍՏՈՍԻ որդ-
ւոյ քոյ և Տեառն ։

Օժանդակեա՛ թևոցդ աղօ-
թիւք՝ խոստովանեալ մայրդ կեն-
դանեաց . և յելիցն իմ յերկրիս
հովտէ՝ առանց լլկանաց հետևել
՚ի կեանս օթևանացդ պատրաս-
տութեան . զի թեթևացի կա-
տարածն իմ ինձ ծանրացելոյս
անօրէնութեամբ . Արասցես տօն
ինձ բերկրութեան զօրն իմ փառ-
նակի՝ ողջացուցիչ երկանցն

Եւայի · բարեխօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛ · զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա՛ զբանիդ հաւատամ զընդունելութիւն · Արտասուօք օգնեա՛ վտանգեցելոյս զօրհնեալդ 'ի կանայս · ծունր խոնարհեցո՛ առ իմ հաշտութիւն ծնօղդ Աստուծոյ · ընդ իմում թշուառիս հոգա՛ խորան բարձրեալդ · ձեռն տուր անկելոյս , տաճա՛ր երկնային · փառաւորեա՛ զորդիդ քո 'ի քեզ՝ Աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն՝ աղախին Աստուծոյ և մայր · բարձրասցի՛ պատիւ քո ինեւ և ցուցցի փրկութիւնն իմ քեւ ,

Եթէ զիս գտցես՝ տիրամայր · թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի · թէ զկորուսեալս շահեսցիս՝ անա-

բառ · թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ · թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ · թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ սուրբ կոյս · թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ Աստուծոյ · թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից · թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ · թէ 'ի խռովութեանցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար · թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ զօրեալ · թէ վասն իմ մտցես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ · թէ զդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն · թէ զբաժանմանն իմ խտրոց քակտեսցես՝ հաշտութիւն · թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծ-

ման ընդունիչ . Թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս . Թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն . Թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց . Թէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հզելից . Թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կատակ նուիրեալ , Օրհնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց . ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենա՛ց ինձ զօրէ . մայրդ բարձրելոյ Տեառն ՅԻՍՈՒՍԻ՝ արարչին երկնի եւ ընաւին երկրի . զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն՝ եւ համայն Աստուածութեամբն . որ փառաւորեալ է ընդ Հօր , եւ Հոգւոյն սրբոյ էութեամբ եւ անքննու-

թեամբ՝ մերոյին՝ բնութեամբս միացելոյ՝ ամենայն և յամենայնում. մի յԵրրորդութենէն . Նմա փառք յաւիտենից յաւիտեանս . Ամէն .

# ՊԱՂԱՏԱՆՔ

## ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Աղաչեմ զանփոխելի տէ-
րութիւն ամենազօր Հոգւոյդ հը-
զօրի . առաքեա զցօղ քաղցրութեան քոյ , և բարեգործեա 'ի յանձին և յիշխանական ազգման զգայութեան՝ զամենալից շնորհս բազմապարգև քո ողորմութեանդ . Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն

*կարծրացեալ սրտիս, յընդունակութիւն արգասեաց հոգւոյ սերմանդ ։ Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս 'ի մեզ ծագեալ եւ աճեցեալ. որ ձեռնադրես Առաքեալս, լցուցանես Մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համրս, եւ բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն Որդի՝ քոյին գործակցութեամբդ ներգործելով զայս ամենայն քարոզեաց զքեզ Աստուած հաւասարակից իսկութեանդ Հօր. Շնորհեա՛ եւ ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ. հետեւել արագաթռիչ ընթացիւք*

մնաց՝ ընդ ոյնհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց։ Եւ 'ի մատչիլ իմ 'ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի, նախ ժամանեսցէ առ իս զթութիւն քո, խօսելով յիս զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո 'ի ժամանակի. 'ի փառս և 'ի գովեստ Աստուածութեանդ քո. 'ի լըրումն շինութեան կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Եւ կարկառեա՛ 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո. և զօրացո՛ զիս շնորհօք զթութեանդ քոյ. փարատեա՛ 'ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան. ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց. ամրանալ ուշիւ իմաստից 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս, Լուսաւորեա՛ յիս վերստին զծագումն անստ-

ուեր հրաշից գիտութեան Աստուածութեան քո հզօր · արժանի լինել առնել և ուսուցանել յօրինակ բարեաց Աստուածասէր լողաց ։ Եւ քեզ ամենայն փառք յամենայնի , ընդ Հօր ամենակալի և ընդ Որդւոյն միածնի և բարերարի · այժմ և յանվախճան յաւիտեանս · Ամէն ։

# ԱՂԵՐՍԱՆՔ

## ԱՌԱՒՕՏԵԱՆ

ԱՐԵԳԱԿՆ արդար · ճառագայթ օրհնեալ · լուսոյ կերպարան · փափագ անձկութեան · բարձրեալ անքնին · զօրեղ ան-

պատում․ բարւոյ բերկրութիւն․ յուսոյ տեսութիւն․ գովեալ երկնաւոր․ Թագաւոր փառաց․ ՔՐԻՍՏՈՍ արարիչ․ խոստովանեալ կեանք ։ Եւ արդ՝ զթերութիւն վրիպանաց բազմախառն ձայնի եղ-կելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ՝ մատուցեմս յաղերս հաճու-թեան հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ ՚ի փորձ եկիր անիծից , կերպարանեալ զիմ նմանու-թիւն․ ամենեւին կենաց օրհնու-թիւն , վերնոց և ներքնոց բարե-խնամօղ տեսուչ համայնից ։ Զի թէ յանձն առեր մեռանիլ վա-սըն իմ, Աստուած և Տէրդ բոլո-րեցուն , որչափ հաճեսցիս առա-ւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել․ ընդ իմ պարտաւո-րիս միշտ աղօթելով ազդակցաւ

մարմնոյդ՝ առեալ 'ի մէնջ՝ առ-
համապատիւդ քո Հայր ։

Եւ վասն արեանդ պատուա-
կանի միշտ մատուցելոյ 'ի հաճու-
թիւն կամաց առաքչիդ , բարձ-
ցին վտանգք մեղուցեալ դատա-
պարտելոյս · թողցին պարտիքն ·
ապաքինեսցի ամօթն · մոռասցին
պատկառանքն · բարեգործեսցին
դատակնիքքն · սատակեսցին որ-
դունքն · վերասցի լալն · հանդար-
տեսցի կրճումն ատամանցն · ըս-
պառեսցին ողբքն · հատցին ար-
տասուքն · մերժեսցի սուգն · հա-
լածեսցի խաւարն · վատնեսցի
հուրն սաստկութեան · հերքես-
ցին տանջանարանքն բազմօրի-
նակք ։

Եկեսցեն զթութիւնք կամո-
ղիդ և պարգևողիդ կենաց ամե-

նից · ծագեսցէ լոյս · արագեսցէ փրկութիւնդ · հասցէ օգնութիւնդ · ժամանեսցէ այցելութիւնդ · կանխեսցէ ցօղդ ողորմութեան · յառաջեսցէ արբուցէ զանդաստանս պասքեալ անկեալ ոսկերացս՝ թշուառութեամբ ՚ի վիհն մահու · ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ բաժակք երկնաւոր արեան կենարարիդ · զերկիրս խնամեալ յաւուրն լուսոյ · որ անծախապէս միշտ պատարագի՝ յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց : Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո գթած ՚ի քեզ զօրացեալ՝ քենորոգեցայց՝ զատեալ ՚ի մեղաց անմահ կենդանութեամբ ՚ի յարութեանն արդարոց՝ Հօր քում

օրհնեցեալ ։ Ընդ որում քեզ փառք՝ և Հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

---

# ԱՂՕԹՔ

## ՎԱՍՆ

## ՆՆՋԵՑԵԼՈՑ

ԱՂԱՉԵՄ և խնդրեմ 'ի քէն ով բազմագութ Աստուած՝ վասն ազգիս մերոյ հնոց և նորոց և համօրէն հաւատալ և յուսալ 'ի քեզ ննջեցելոցն ։ Եւ մանաւանդ՝ վասն իմոց մարմնաւոր և հոգևոր ծնողաց, եղբարց, քերց, ազգականաց, սիրելեաց, 'ի բարիս կըր-

Թողեա և ուսուցչաց, և բարեկա-
մաց, և հոգևոր վարդապետաց և
ամենայն աշխատաւորաց և երախ-
տաւորաց մերոց՝ ի քեզ ննջեցելոց ։
Զորս յիշեսցես յողորմութիւնս
քոյ յաւուր մեծի գալստեան
քոյ · Թողութիւն շնորհեսցես ա-
մենայն մեղաց և սխալանաց նոցին ·
և դասեսցես ընդ սուրբս քո յա-
ջակողման դասուն · և տացես
լսել զերանաւէտ բարբառն քո
թէ՝ եկայք օրհնեալք Հօր իմոյ · և
ընդ երախտեաց նոցին որ առ մեզ՝
միայն բիւրապատիկս հատուսցես
՚ի հոգիս նոցա · և զմեզ անդա-
տապարտ արասցես ՚ի նոցին
պարտուցն · և քեզ փառք յա-
ւիտեանս յաւիտենից · Ամէն ։

# ԱՂՕԹՔ

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

---

ՈՐՊԷՍ ՊԱՏՈՒԻՐԷ ՓՐԿԻՉՆ ՄԵՐ ։

*Յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք ։*

Մտթ · Գ—Զ · Հ—Թ ։

ՀԱՅՐ *մեր որ յերկինս ես․ սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ Արքայութիւն քո․ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի՛ տանիր*

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ. Զի քո՛ է Արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն.

ՎԵՐՋ.

| ՎՐԻՊԱԿ · | ԷՋ · | ՏՈՂ · | ՈՒՂԻՂ · |
|---|---|---|---|
| տէսաչայ | 8· | 1· | տէսաչաց |
| Տէառն | 18· | 6· | Տէառն |
| լօսւմն | 26· | 5. | լոււմն |
| ԱՌՆՈԵՒԼՆ | 35· | 9· | ԱՌՆՈՒԼՆ |
| ՅԻՈՈՒՍ | 40· | 6· | ՅԻՍՈՒՍ |
| բաղում | 53· | 14· | բազում |
| ՅԻՍՈՒՍԻ | 67· | 17· | ՅԻՍՈՒՍ |
| ՆԱԼ | 109· | 00· | ՆԱԽ |
| նորօղութիւն | 110· | 20· | նորոգութիւն |
| քտղցրսւթեամբ | 113· | 6· | քաղցրութեամբ |

| ՎՐԻՊԱԿ · | ԷՋ · | ՏՈՂ · | ՈՒՂԻՂ, |
|---|---|---|---|
| հակառտկութեամբ | 116· | 15· | հակառակութեամբ |
| շաւրջ | 137· | 11· | շուրջ |
| լուա́ | 142· | 18· | լուա́ |
| ԵՐԿՈՑԵԱՆ | 182· | 00· | ԵՐԵԿՌՑԵԱ՛Ն |
| ծառ այ | 188· | 15· | ծառայի |
| աղախնո | 193· | 14· | աղախնոյ |
| ամէնա;ն | 193· | 15· | ամէնայն |
| ԱՐՀԱՒԻՐԱՑ | 205· | 6· | ԱՐՀԱՒԻՐԱՑ |
| դտասստան | 226· | 14· | դատաստան |
| Զարածս | 229· | 2· | զարարածս |

| ՎՐԻՊԱԿ· | ԷՋ· | ՏՈՂ· | ՈՒՂԻՂ· |
|---|---|---|---|
| Ի՛ՂԱՁԷՄ | 247· | 7· | Ի՛ՂԱՁԵՄ |
| Ի՛ՂԱԱՁԵՄ | 254· | 9· | Ի՛ՂԱՁԵՄ |

# ՏՊԱԳՐԻՆ

ԹԱԹԱՂ ՕՐՏԻ
ՀԱՐՍԿԵՆ
ԺԱՄԱԳԻՐՔ
ՃԱՌ ՀԱՒԱՏՈՅ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ
ՆԱՂԿԱԶԱՐԴ
ԱԶԳԱՍԷՐ

---

## ՎԱՃԱՌԻՆ

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՂՕԹԻՑ ԻՔ · 1—8
ԳԱՆՁԱՐԱՆ ԱՂՕԹԻՑ 3

---

Յ'ԱՐԺԷԻՒ ՏՊԱՐԱՆԻ ԿՕՂՄԱՆ
[illegible]